

## **Չինաստանի ձգտումը գլոբալ գերտերության կարգավիճակի և ԱՄՆ դիմադրությունը**

**ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Բրյուսսելի անվան պետական համալսարան*

**ԱԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

*Բրյուսսելի անվան պետական համալսարան*

**ԱՆԱՀԻՏ ՍՈՒՐԱԴՅԱՆ**

*Բրյուսսելի անվան պետական համալսարան*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել աշխարհաքաղաքական մրցակցության արդի գործընթացների հնարավոր զարգացումները հետկորոնավիրուսային աշխարհում: Այդ նպատակով ուսումնասիրվել է Չինաստանի ձգտումը և Պեկինի նետած մարտահրավերը՝ որպես գլոբալ գերտերության կարգավիճակ ունեցող պետության դերակատարման հավակնորդ: Որպես առանցքային գործոն դիտարկվել են Չինաստանի նախաձեռնողականությունը, մասնավորապես՝ միջազգային ներդրումների ոլորտում, ինչպես նաև փափուկ ուժի և դիվանագիտության կիրառումը Ասիայից մինչև Աֆրիկա և Եվրոպա՝ «Գոտի և Ճանապարհ» նախաձեռնության համատեքստում: Ուսումնասիրման հիմնական առարկա է դեռևս միակ գլոբալ գերտերության կարգավիճակ ունեցող ԱՄՆ-ի քաղաքականությունը՝ չինական նկրտումներին հակադդեռ նպատակով: Ուսումնասիրվել են Չինաստանին զսպելու նպատակով ԱՄՆ կողմից կիրառվող մեխանիզմները, քաղաքական և տնտեսական գործիքակազմը, այդ թվում՝ պատժամիջոցների կիրառումն ու Չինաստանում մարդու իրավունքների խնդիրը միջազգային օրակարգային հարց դարձնելը:

### **Բանալի բառեր**

ԱՄՆ, Չինաստան, գլոբալ գերտերություն, աշխարհաքաղաքական մրցակցություն:

### **Նախաբան**

Աշխարհակարգի և միջազգային համակարգում տարբեր պետությունների կողմից գերակայություն հաստատելու հարցերը մշտապես հանդիսացել են քաղաքագիտական հետազոտությունների կարևորա-

գույն թեմաներից մեկը: Ուժերի հավասարակշռումն ու աշխարհաքաղաքական բևեռները պատմության ընթացքում մշտապես փոփոխությունների են ենթարկվել: Եթե Վեստֆալյան և Վիեննայի միջազգային համակարգերը աչքի էին ընկնում իրենց «եվրոպակենտրոնությամբ», ապա Վերսալ-Վաշինգտոնյան միջազգային համակարգը, որում իր ուրույն տեղը գրավեց ԱՄՆ-ն, փաստացիորեն դարձավ բազմաբևեռ վերջին աշխարհակարգը, որին հաջորդելու եկավ Յալթա-Պոտսդամյան միջազգային երկբևեռ համակարգը՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գերակայությամբ:<sup>1</sup> ԽՍՀՄ փլուզումից և Սառը պատերազմի ավարտից հետո գլոբալ գերտերության կարգավիճակը պահպանեց միայն Միացյալ Նահանգները: Հավասարակշռման մեխանիզմի բացակայությունն էլ հնարավորություն տվեց Վաշինգտոնին վերջին 30 տարիների ընթացքում միանձնյա որոշումներ կայացնել Հարավսլավիայի, Իրաքի, Աֆղանստանի, Սիրիայի և այլ պետությունների ապագայի վերաբերյալ:

Համակարգային մակարդակում այդ գործընթացների ուսումնասիրության նպատակով կարելի է պետությունները դասակարգել «գլոբալ գերտերություն» և «գերտերություն», իսկ տարածաշրջանային մակարդակում՝ «տարածաշրջանային գերտերություն» խմբերի, որոնցից որևէ մեկին դասվելու համար պետությունը պետք է բավարարի ստորև բերված չափանիշների:

**Գլոբալ գերտերության (Global Superpower)<sup>2</sup>** կարգավիճակը պահանջում է ողջ միջազգային համակարգում կարողությունների լայն կիրառում: Գլոբալ գերտերությունը պետք է ունենա առաջնակարգ ռազմաքաղաքական հզորություններ (ժամանակաշրջանի բոլոր չափանիշներին համապատասխան) և տնտեսություն՝ ապահովելու նման կարողություններ ու պահանջներ: Գլոբալ գերտերությունը պետք է ակտիվ դերակատար լինի համակարգի բոլոր կամ գրեթե բոլոր տարածաշրջանների «անվտանգայնացման» և «ապանվտանգանացման» հարցերում՝ հանդես գալով որպես սպառնալիք, երաշխավոր, դաշնակից կամ, ըստ անհրաժեշտության, ինտերվենցիա իրականացնող: Սառը պատերազմի ավարտից հետո միակ գլոբալ

<sup>1</sup> **Kissinger H.**, World Order, Reflections on the Character of Nations and the Course of History, New York, Penguin Press, 2014, p. 56.

<sup>2</sup> **Bremmer I.**, Forget about China, the US is Still Global Superpower. *Time Magazine*, May 18, 2015 <https://time.com/3899972/us-superpower-status-military/>

գերտերությունը մնաց ԱՄՆ-ն, որն այսօրվա դրությամբ լրջագույն քաղաքական, տնտեսական և ռազմական ազդեցություն ունի բոլոր աշխարհամասերում՝ առանց որևէ բացառության<sup>3</sup> և ըստ էության ամերիկյան այս հեգեմոնիային լուրջ մարտահրավեր է նետում միայն Չինաստանը:<sup>4</sup> Չինաստանն իր տնտեսական և քաղաքական ազդեցությամբ և աճի տեմպերով մոտենում է գլոբալ գերտերության կարգավիճակին:<sup>5</sup>

**Գերտերություն (Superpower)** համարվելու համար անհրաժեշտ չէ բոլոր ոլորտներում մեծ հզորություններ ունենալ և անհրաժեշտ չէ, որ այդ պետությունները մասնակից լինեն ամբողջ միջազգային համակարգի «անվտանգայնացման» գործընթացին: Ի տարբերություն տարածաշրջանային գերտերությունների՝ գերտերությունները դիտարկվում են, որպես գլոբալ գերտերություններին կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկարում տնտեսական, ռազմական և քաղաքական առումով մարտահրավեր նետելու ներուժ ունեցող պետություններ: Այդպիսի պետությունները զուտ տարածաշրջանային գերտերություն չեն համարվում, այլ ունակ են իրենց ներկայությունն ապահովել մեկից ավելի տարածաշրջաններում: Սառը պատերազմի ավարտից հետո նմանատիպ կարգավիճակ ունեցող պետություններ են, օրինակ՝ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան (ԵՄ), Չինաստանը, Ճապոնիան և Ռուսաստանը:

**Տարածաշրջանային գերտերությունների (Regional Superpower)** ազդեցությունները սահմանափակվում են իրենց տարածաշրջանի սահմաններով և համաշխարհային քաղաքականության մակարդակում լուրջ ազդեցություն չունեն: Տարածաշրջանային գերտերությունների թվին են դասվում այնպիսի պետություններ, ինչպիսիք են Թուրքիան, Իրանը, Իսրայելը, Հնդկաստանը, Բրազիլիան, Ինդոնեզիան, Պակիստանը: Այսպիսով, երկբևեռ աշխարհին

<sup>3</sup> **Beckley M.**, Why the United States Is the Only Superpower, *Tufts Now*, Nov. 2019. <https://now.tufts.edu/articles/why-united-states-only-superpower>

<sup>4</sup> *China Seen Overtaking U.S. as Global Superpower*, Pew Research Center Global Attitudes & Trends, July 13, 2001.

<sup>5</sup> **Petz D.**, China's rise as a global superpower, IFARA, September 2019. [https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=3467668](https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=3467668)

փոխարինելու է գալիս «1+4» բանաձևը (ԱՄՆ+Չինաստան, ԵՄ, Ռուսաստան, Ճապոնիա)<sup>6</sup>:

Այս տրամաբանական դասավորվածության համատեքստում Չինաստանը, ավելացնելով իր ներքին և արտաքին հզորությունները, մարտահրավեր է նետում ԱՄՆ-ի գերակայությանը և իրեն դրսևորում որպես գլոբալ գերտերություն դառնալու մեծ ներուժ ունեցող միջազգային դերակատար: Հակառակ ԱՄՆ ձգտումների՝ Չինաստանը ավելի է հզորացնում իր կենտրոնական իշխանությունը, վարչակարգը ավելի է ուժեղացնում վերահսկողությունը տնտեսության վրա, իսկ արտաքին քաղաքականությունը դարձնում ավելի հավակնոտ և նախաձեռնող՝ Սսիայում Միացյալ Նահանգների կողմից աջակցություն վայելող համակարգը ձևափոխելու նկրտումներով: Չինաստանը վերջին տարիներին էապես փոխել է իր արտաքին քաղաքականությունը: Այն այլևս չի կենտրոնանում միայն իր ներքին զարգացման վրա, այլ հավակնում է համաշխարհային առաջնորդության՝ որպես հենք ունենալով հզոր տնտեսություն, ռազմական և գաղափարախոսական (այդ թվում նաև մշակութային) ուժ: Վաշինգտոնի դանդաղ և ոչ համարժեք պատասխանի հետևանքով Չինաստանն առավել ակտիվ քայլեր է ձեռնարկում Սսիայի նկատմամբ տնտեսական, անվտանգային և քաղաքական գերիշխանություն հաստատելու համար: Դա էլ, բնականաբար, հակասում է Միացյալ Նահանգների կենսական շահերին:<sup>7</sup>

Չնայած «1+4» բանաձևին՝ այժմ որոշ փորձագետներ խոսում են միջազգային հարաբերություններում ուժի վակուումի մասին՝ այսպես կոչված «G-Zero» աշխարհի, երբ ոչ մի տերություն կամ տերությունների խումբ չի իրականացնում համաշխարհային առաջնորդություն՝ դիմագրավելու միջազգային մարտահրավերներին:<sup>8</sup> Ճիշտ է, Միացյալ Նահանգները մյուս երկրների համեմատ ունի առավելություններ ու շարունակում է պահպանել գլոբալ գերտերության իր կարգավիճակը,

<sup>6</sup> **Buzan B., Wæver O.**, Regions and powers: the structure of international security. Cambridge, Cambridge University Press, 2003, pp. 31, 34-37.

<sup>7</sup> **Ratner E., Greenberg M.**, Rising to the China Challenge, Council on Foreign Relations, Feb. 15, 2018.

<sup>8</sup> **Bremmer I.**, The Centenary of the Great War and Today's G-Zero, *Horizons: Journal of International Relations and Sustainable Development*, 2014, 1, 64-79.

այնուամենայնիվ, միաբնեռ աշխարհակարգի հաստատման համար դա բավարար չէ: Մյուս կողմից էլ Չինաստանի և Ռուսաստանի ազդեցությունները գնալով աճում են, սակայն դա էլ հերթին բավարար չէ բազմաբնեռ աշխարհակարգի մասին խոսելու համար:<sup>9</sup> Հետաառըպատերազմյան ժամանակաշրջանի միակ գերտերություն համարվող ԱՄՆ-ն՝ գնալով կենտրոնանում է սեփական ներքաղաքական խնդիրների վրա՝ փոխարենը միջազգային մակարդակում իր ազդեցությունը շարունակում է նվազել, որն էլ հիմք է դառնում «G-Zero» աշխարհի ձևավորմանը: Ինչպես նշում է Իան Բրեմմերը, «Նման պայմաններում զարգացած և զարգացող երկրների քաղաքական առաջնորդները՝ ծանրաբեռնված ներքին մարտահրավերներով, առավել մեկուսացված դիրք են գրավում. անմիջական ռիսկերը առավել կարևոր են դառնում, քան երկարաժամկետ հեռանկարի օգուտները»:<sup>10</sup> Այս հիմնավորումներն ու դիտարկումները տեղին են, մանավանդ եթե հաշվի առնենք նախագահ Թրամփի «մեկուսացման» քաղաքականությունը՝ ներքին խնդիրները կարգավորելու, հետո աշխարհի խնդիրներով զբաղվելու տեսլականով:<sup>11</sup>

Կորոնավիրուսը դարձավ «G-Zero» աշխարհի առաջին ճգնաժամը: Ստեղծված իրավիճակը կրեթի ավելի շատ ազգային և աշխարհաքաղաքական հակամարտությունների, որոնցից ԱՄՆ-Չինաստան մրցակցությունը կլինի այս հակամարտությունների կենտրոնում: Ըստ որոշ գնահատականների, ականատես լինելով ԱՄՆ-ի՝ կորոնավիրուսին արձագանքի թույլ կողմերին ու միակողմանիությանը, Չինաստանից աճող միջազգային կախվածությանն ու այլ երկրների կողմից ռազմավարության և առաջնորդության պակասին, Չինաստանի համար հնարավորություն է ստեղծվում ստանձնել առավել ակտիվ համաաշխարհային դեր: Թեև այն ընդհանուր առմամբ դեռևս պատրաստ չէ փոխարինելու ԱՄՆ-ին՝ որպես գլոբալ գերտերություն, հատկապես երբ խոսքը գնում է այլ երկրներում

<sup>9</sup> **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.**, Եվրասիական կենտրոնի մեծ աշխարհաքաղաքական վերաբեռնավորման ավարտը, *Հայկական Քաղաքագիտական Հանդես*, 2020, 1(13), 5-52.

<sup>10</sup> **Bremmer I.**, *The Centenary...*, Op. cit.

<sup>11</sup> **Curran J.**, “Americanism, not globalism”: President Trump and the American mission, Lowy Institute for International Policy, July 2018.

ռազմական ուժ կիրառելուն, հետևորդնավիրուսային ժամանակաշրջանում, այն պատրաստ կլինի պայքարել գլոբալ գերտերության կոչման համար:<sup>12</sup> Ինչպես նշում է Հենրի Քիսինջերը, իրականությունն այն է, որ աշխարհը այլևս նույնը չի լինի կորոնավիրուսից հետո:<sup>13</sup>

Այնուամենայնիվ, ԱՄՆ ցանկացած ջանք գործադրում է հակազդելու Չինաստանի ազդեցության տարածմանը տարբեր ոլորտներում: Չինաստանի զսպումը հիմնված է երկու սյուների վրա, մեկը աշխարհաքաղաքականն է, մյուսը՝ աշխարհառազմավարականը: Աշխարհաքաղաքական առումով, Չինաստանի զսպումը պահում է վերջինիս տարածաշրջանային գերտերության կարգավիճակում և ապահովում է ամերիկյան գերիշխանությունը: Ըստ այլ հետազոտողների գնահատման, ԱՄՆ չի հանդուրժում իրեն հավասար մրցակիցների և մտադիր է մնալ տարածաշրջանում աշխարհի միակ հեգեմոնը:<sup>14</sup>

Հատկանշական է, որ հետևորդնավիրուսային աշխարհում Չինաստանի գերիշխանության դեմ պայքարի հիմնական թեզերից է նախագահ Թրամփի կողմից «Չինական վիրուս» հասկացության շրջանառումը և Չինաստանին վիրուսի տարածման մեջ մեղադրելը, ինչն արդեն իսկ հարձակողական քաղաքականության հիմք է ձևավորում:

### **Չինաստանի առաջխաղացումը դեպի գլոբալ գերտերության կարգավիճակ**

Արտաքին քաղաքական ասպարեզում Չինաստանը շարունակում է հաստատել սեփական դիրքերը, և Չինաստանի ներկայիս վարչակազմն ընտրել է այն իրականացնելու մեկ այլ սկզբունք՝ տարբերվող նախորդ վարչակազմների մոտեցումներից: Եթե նախկին-

<sup>12</sup> **Bremmer I.**, Coronavirus and the World Order, *Horizons: Journal of International Relations and Sustainable Development*, Spring 2020, 16, 14-23.

<sup>13</sup> **Kissinger H.**, The Coronavirus Pandemic Will Forever Alter the World Order, *Wall Street Journal*, April 3, 2020, <https://www.wsj.com/amp/articles/the-coronavirus-pandemic-will-forever-alter-the-world-order-11585953005>, (07.07.2020).

<sup>14</sup> **Alexandre V., Teixeira G.**, United States' Policy Strategy in South China Sea, *Scholar Journal of Applied Sciences and Research*, 2018, 1, 6, 24-32.

նում Չինաստանն իրականացնում էր «արտաքին աշխարհին սեփական հզորությունը ցույց չտալու սյառափնյան» քաղաքականությունը, ապա ներկայումս որդեգրել է արտաքին քաղաքականության փոքր ինչ այլ, սակայն դեռևս զգուշավոր ձևաչափ: Չինական պաշտոնական դիսկուրսում հաստատվել է մի նոր եզրույթ՝ «Միի դիվանագիտություն» անունով, իսկ Չինաստանի կառավարության պաշտոնական լրատվական գործակալություն Սինհուան իր թվիթերյան անգլալեզու ալիքում օգտագործում է #Xiplomacy հեշթեգը: Կուսակցական համագումարներների վերջին 20 տարվա ելույթներն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ Կոմունիստական կուսակցության ոչ մի առաջնորդ Չինաստանն այդքան հաճախ «հզոր ուժ» չի կոչել, ինչքան Մին իր բացման ելույթի ժամանակ: Այնուամենայնիվ, Մին նաև շեշտում է, որ Չինաստանը կայսերական ձգտումներ չունի, ոչ էլ ձգտում է միջազգային գերիշխանության:<sup>15</sup>

Նախագահ Միի նոր դիվանագիտության հենասյուններից մեկը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունն է, որը բաղկացած է «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտի» և «Ծովային Մետաքսի ճանապարհ» նախագծերից: Մի Ծինայինն առաջին անգամ «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտի» նախաձեռնության մասին խոսել է 2013թ. Ղազախստանի Նազարբաև համալսարանում ելույթի ժամանակ: Այս նախաձեռնությունը պետք է Չինաստանը կապեր Եվրոպայի հետ ցամաքային ճանապարհով: Իսկ Ասիան Աֆրիկայի և Եվրոպայի հետ կապող ծովային ճանապարհը ստացավ «Ծովային Մետաքսի ճանապարհ» անվանումը, որի մասին նախագահ Մին հայտնեց 2013թ. Ինդոնեզիայում ելույթի ժամանակ:<sup>16</sup> «Մետաքսի ճանապարհը»՝ չինական կառավարության ներկայացմամբ, մի գաղափար է, որը նպատակաուղղված է մեծացնելու Ասիա, Աֆրիկա և Եվրոպա մայրցամաքների միջև փոխկապակցվածությունը: Այդ փոխկապակցվածությունը կմեծացնի առևտրաշրջանառությունը և կլիթանի տարածաշրջանային երկարաժամկետ տնտեսական աճն և

<sup>15</sup> Денисов И., Внешняя Политика Китая при Си Цзиньпине: Преемственность и Новаторство, *Контуры глобальных трансформаций: политика, экономика, право*, 2017, **10**, 5, 83-97.

<sup>16</sup> Verlare J., Putten F., 'One Belt, One Road' An Opportunity for the EU's Security Strategy, Clingendael Policy Brief, 2015, p. 7.

զարգացումը՝ օգուտներ բերելով նախաձեռնության մասնակից բոլոր կողմերին:<sup>17</sup>

Ակադեմիական հարթությունում չկա փոխհամաձայնություն կապված «Գոտի և ճանապարհ»-ի նպատակների, ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների վրա դրա ազդեցության և աշխարհում Չինաստանի դերի վերաբերյալ: «Գոտի և ճանապարհ»-ը հիմնականում դիտարկվում է որպես նախագիծ, որը կարող է կտրուկ փոխել Կենտրոնական Ասիայի տնտեսական և անզամ քաղաքական լանդշաֆտը՝ ավելի քիչ ազդեցություն ունենալով նաև Հարավարևելյան Ասիայում և Եվրոպայում: Այդ փոփոխությունների շուրջ հազվադեպ հանդիպող լավատեսության հետ մեկտեղ ամերիկյան կողմից մատնանշվում են բազմաթիվ մտահոգություններ՝ կապված «Գոտի և ճանապարհ» նախագծի տնտեսական կենսունակության և աշխարհակարգի ու ամերիկյան շահերի վրա դրա ազդեցության հետ: Մի վերլուծաբան այն կարող է դիտարկել որպես «լիովին առևտրային ձգտում», մյուսի կողմից՝ որպես «ռազմավարական գամբիտ»՝ ուղղված Չինաստանի հեգեմոնիայի ստեղծմանը կամ անզամ «Չինականտրոն» աշխարհակարգի հիմքը դնելուն:<sup>18</sup>

Եվրասիական տարածաշրջանում բացի «Գոտի և ճանապարհ»-ից գործում է ևս մեկ հավակնոտ նախագիծ, այն է՝ Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), որի լոկոմոտիվը Ռուսաստանն է և գործում է 2015թ.-ից ի վեր, որը նույնպես մարտահրավեր է Եվրասիական տարածաշրջանում ԱՄՆ ազդեցությանը:

Ըստ որոշ գնահատականների, հիմնադրման փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Գոտի և ճանապարհ» զուտ տնտեսական նախաձեռնություն է՝ ուղղված առևտրի ընդլայնմանը, իսկ ԵԱՏՄ-ն առավել մանրամասն մշակված նախագիծ է, որի նպատակն է ապահովել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը՝ տնտեսությունների համակարգ-

<sup>17</sup> **Leer Y., Yau J.**, China's new silk route: The long and winding road, PwC's Growth Markets Centre, 2016, <https://www.pwc.com/gx/en/growth-markets-center/assets/pdf/china-new-silk-route.pdf>, (13.07.2020).

<sup>18</sup> **Chance A., Mafinezam A.**, American Perspectives on the Belt and Road Initiative, Sources for Concern, Possibilities for U.S.-China Cooperation, Institute for China-America Studies, November 2016.



ման հետ մեկտեղ: Ավելին, նախաձեռնությունների կառուցվածքները զգալիորեն տարբերվում են: ԵԱՏՄ-ն դասական կառույց է՝ մարմիններով, որոնք ունեն հստակ գործառնություններ և որոշումների կայացման ընթացակարգեր: «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունն իր հերթին բաղկացած է Չինաստանի հովանու ներքո՝ Չինաստանի և համապատասխան երկրների միջև կնքված երկկողմ համաձայնագրերից:<sup>19</sup>

ԵԱՏՄ-«Գոտի և ճանապարհ» նախաձեռնության համագործակցության առումով նախագահ Պուտինը տարբեր առաջարկներ է արել: Նա սկսեց համադրելով «Գոտի և ճանապարհը» և ԵԱՏՄ-ն ԵՄ-ի հետ մեկտեղ, որը կոչեց «ինտեգրումների ինտեգրումը»: Հետագայում, նա վերանայեց այս ինստիտուտները՝ ներառելով ԵԱՏՄ-ն, ԱՍԵԱՆ-ը, Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ) և «Գոտի և ճանապարհը»՝ չներառելով ԵՄ-ն: Մեկ այլ փոփոխություն տեղի ունեցավ 2016թ., երբ Պուտինը ներկայացրեց «Ավելի մեծ եվրասիական համագործակցության» գաղափարը, որը, ըստ ամենայնի, ներառում է ԵԱՏՄ-ն, Չինաստանը, Հնդկաստանը, Պակիստանը, Իրանը և ԱՊՀ երկրները: Մեկ տարի անց նա առաջարկեց, որ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը դառնա «Ավելի մեծ եվրասիական համագործակցության» մաս: Վերջինս ընդգրկելու էր «Գոտի և ճանապարհը», ԵԱՏՄ-ն, ՇՀԿ-ն և ԱՍԵԱՆ-ը:<sup>20</sup>

Համագործակցության ուղղությամբ գործնական քայլեր սկսեցին ձեռնարկվել 2015թ., երբ «Գոտի և ճանապարհը» և ԵԱՏՄ-ն համակարգելու մտադրության մասին հայտարարումից հետո Եվասիական տնտեսական հանձնաժողովը սկսեց իր քաղաքականությունն իրականացնել երկու մակարդակով. 1) ԵԱՏՄ և Չինաստանի միջև առևտրի օրենսդրական կարգավորումներ, և 2) ներդրումների նախագծերի ընտրություն: Նախ, Հանձնաժողովը նախատեսում էր Չինաստանի և ԵԱՏՄ-ի համար համատեղ շահավետ մուտք դեպի միմյանց շուկաներ: «Գոտի և ճանապարհ»-ի և ԵԱՏՄ-ի

<sup>19</sup> **Ananyeva E.**, One Belt One Road Versus the Eurasian Economic Union, Peace Research Center Prague, 2018.

<sup>20</sup> **Shakhanova G., Garlick J.**, The Belt and Road Initiative and the Eurasian Economic Union: Exploring the “Greater Eurasian Partnership”, *Journal of Current Chinese Affairs*, May 2020, 1-25.

համակարգումը ենթադրում էր ոչ միայն ԵԱՏՄ տարածքով չինական ապրանքների տեղափոխում Եվրոպա, այլև ԵԱՏՄ ապրանքների համար հասանելիության ապահովում դեպի չինական շուկա: 2018թ. կողմերի բանակցությունները հանգեցրին «Առևտրի և տնտեսական համագործակցության համաձայնագրի» ընդունմանը Չինաստանի և ԵԱՏՄ-ի միջև: Այս համաձայնագիրը բազմաթիվ բարձր մակարդակի պաշտոնական հանդիպումների և քննարկումների արդյունք էր. 2013-2017թթ. ընթացքում Պուտինն ու Սի Ծինպինը հանդիպել են 20 անգամ, իսկ նախագահներ Նազարբանևն ու Սին 2012-2018թթ. ընթացքում հանդիպել են 18 անգամ:<sup>21</sup> «Առևտրի և տնտեսական համագործակցության համաձայնագիրը» ոչ արտոնյալ առևտրային համաձայնագիր է: Նմանատիպ համաձայնագրերը մաքսային և տուրքերի արտոնություններ չեն տրամադրում երկու կամ ավելի երկրների միջև փոխադարձ առևտրի համար: Այդ համաձայնագրերը կարող են ընդգրկել առևտրատնտեսական համագործակցության հարցերի ավելի լայն շրջանակ, օրինակ՝ ոչ մաքսային խոչընդոտները, սահմանների կարգավորումը և կառավարումը, կապիտալի տեղաշարժման խոչընդոտները և ներդրումային ռեժիմները: ԵԱՏՄ անդամ երկրները ներկայումս պատրաստ չեն Չինաստանի հետ լիարժեք լայն առևտրի համաձայնագրի: Սա կարող է պարզապես վտանգավոր լինել իրենց արդյունաբերության համար: Դա է պատճառը, որ նրանք բանակցում էին «միջանկյալ համաձայնագրի» կնքման շուրջ, որը նախատեսված է ԵԱՏՄ-ի և Չինաստանի միջև տնտեսական համագործակցության խթանման համար՝ նվազեցնելով որոշ կարգավորիչ խոչընդոտներ մաքսային կառավարման, կապիտալի տեղաշարժի և այլ ոլորտներում:<sup>22</sup>

ԵԱՏՄ-ի համար Չինաստանը՝ որպես առանձին վերցրած երկիր, առաջինն է: ԵԱՏՄ անդամ-պետությունների և Չինաստանի միջև առևտրաշրջանառությունը 2019թ. ընդհանուր առմամբ կազմել է

<sup>21</sup> Նույն տեղում

<sup>22</sup> Report 43 Eurasian Economic Integration-2017, Eurasian Development Bank, Centre for Integration Studies, Saint Petersburg, 2017, p. 25.

132.5 միլիարդ դոլար:<sup>23</sup> Համեմատության համար, 2018թ. ԵԱՏՄ-Չինաստան առևտրաշրջանությունը կազմել է 126.3 միլիարդ դոլար իսկ ԵԱՏՄ-ԵՄ՝ 352.1 միլիարդ դոլար:<sup>24</sup> ԵԱՏՄ անդամ երկրներում Չինաստանի տնտեսական ներկայության ավելացումը իրականացվում է ոչ միայն փոխադարձ առևտրի, այլ նաև ուղիղ ներդրումների ընդլայնման միջոցով: Կապիտալի ուղիղ ներդրումների առավել մեծ մասը կենտրոնացած է Ղազախստանում, որտեղ ընդհանուր կուտակային ծավալը հասել է 21.5 միլիարդ դոլարի: 2017թ. փետրվարի 1-ի տվյալներով Ղազախստանում գրանցված էր 2783 ձեռնարկություն՝ չինական կապիտալի մասնակցությամբ: Հատկանշական է, որ Կենտրոնական Ասիայում Չինաստանի կողմից նախագծերի ֆինանսավորման մեջ մեծ դեր են խաղում վարկերը, որոնցով իրականացվող ծրագրերի համար պարտադիր պահանջվում է ներգրավել չինական հումք, տեխնիկա, աշխատուժ: Նման մեխանիզմների օգտագործումը թույլ է տալիս առավելագույնս կիրառել չինական արտադրական ռեսուրսները և բերում է այդ երկրներում Չինաստանի տնտեսական ներկայության աճին:<sup>25</sup> Այդ է պատճառներից մեկը, որ ներկայումս ԱՄՆ-ն Չինաստանը դիտարկում է իր գլխավոր մրցակիցներից մեկը համաշխարհային քաղաքական թատերաբեմում: Դա է վկայում 2017թ. դեկտեմբերին հրապարակված ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության մեջ հետևյալ ձևակերպումը. «Չինաստանը և Ռուսաստանը մարտահրավեր են նետում ամերիկյան հզորությանը, ազդեցությանը և շահերին՝ փորձելով խարխլել ամերիկյան անվտանգությունն ու բարեկեցությունը: Նրանք նպատակ ունեն տնտեսությունները պակաս ազատ և արդար դարձնել, ավելացնել զորքերը և վերահսկել տեղեկատվությունն ու տվյալները՝ իրենց հասարակությունները ճնշելու և իրենց ազդեցությունը

<sup>23</sup> Об итогах внешней торговли товарами Евразийского экономического союза, Евразийская Экономическая Комиссия, Аналитический обзор 25 февраля 2020, сс. 6-7.

<sup>24</sup> Об итогах внешней торговли товарами Евразийского экономического союза, Евразийская Экономическая Комиссия, Аналитический обзор 26 февраля 2019, сс. 6-7.

<sup>25</sup> **Воловик Н.**, Торгово-Экономические Отношения Евразийского Экономического Союза с Китайской Народной Республикой, *Экономическое Развитие России*, 2018 Октябрь–Ноябрь, **25**, 10, 28-33.

ընդլայնելու համար... Ռազմական արդիականացման միջոցով Չինաստանը փորձում է հասնել Հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գերիշխանության, ընդլայնել իր տնտեսական մոդելը և իր օօգտին վերադասավորել տարածաշրջանը»:<sup>26</sup> Ի պատասխան նմանատիպ ձևակերպումների, Չինաստանի Արտաքին գործերի նախարարությունը հորդորեց ԱՄՆ-ին դիտավորյալ չաղավաղել Չինաստանի ռազմավարական մտադրությունները և կոչ արեց մի կողմ թողնել այդ հնացած սառըպատերազմյան գաղափարները:<sup>27</sup> Չնայած Չինաստանի նկատմամբ ամերիկյան նոր մոտեցմանը՝ Պեկինը փորձում է հավատարիմ մնալ իր՝ 2010թ. հայտարարած «գերտերությունների միջև նոր տեսակի հարաբերությունների» տրամաբանությանը, որը, սակայն, նոր իրավիճակում դժվար իրականանացվող է: Դեռ 2017թ. փետրվարին ԱՄՆ նախագահական ընտրություններից հետո Չինաստանի ԱԳՆ փոխխոսնակը հայտարարեց, որ իր երկիրը պատրաստ է նոր տեսակի հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ, որոնք հիմնված են փոխշահավետության, ոչկոնֆլիկտայնության, փոխադարձ հարգանքի վրա: Այնուամենայնիվ, իրադարձությունների հետագա զարգացումները ցույց տվեցին, որ չին-ամերիկյան հարաբերությունները Դոնալդ Թրամփի նախագահության շրջանում թևակոխեցին նոր՝ առավել լարված փուլ:<sup>28</sup>

Գերտերությունների միջև պայքարի մի կիզակետ է Կենտրոնական Ասիայի տարածաշրջանը, որը Ռուսաստանը դիտարկում է որպես իր ավանդական ազդեցության գոտի, թեև մյուս գերտերությունները, ինչպիսիք են ԱՄՆ-ն և Չինաստանը, նույնպես ունեն իրենց շահերն այս տարածաշրջանում և ձգտում են ընդլայնել համագործակցությունը տարածաշրջանի պետությունների հետ:

<sup>26</sup> National Security Strategy of the United States of America, December 2017, <https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2017/12/NSS-Final-12-18-2017-0905-2.pdf>, (13.07.2020).

<sup>27</sup> **Swaine M.**, A Relationship Under Extreme Duress: U.S.-China Relations at a Crossroads, Carnegie Endowment for International Peace. January 16, 2019, <https://carnegieendowment.org/2019/01/16/relationship-under-extreme-duress-u.s.-china-relations-at-crossroads-pub-78159>, (13.07.2020).

<sup>28</sup> **Singh T.**, Overview of US-China Relations under the Trump Administration, *Vivekananda International Foundation*, March 2018, p. 14.

Կենտրոնական Ասիան Ռուսաստանը դիտարկում է որպես «մերձավոր արտասահման»: Ռուսաստանի գերիշխող դիրքը Կենտրոնական Ասիայում պայմանավորված է ԽՍՀՄ-ից ժառանգած տնտեսական և հաղորդակցային կապերով, Կենտրոնական Ասիայի էլիտաների հետ անձնական կապերով, որոնց անվտանգությունը Մոսկվան ապահովում է (զենքի մատակարարումներ, կայազորներ), ինչպես նաև արաձաշրջանում ռուսաց լեզվի համընդհանուր տիրապետման միջոցով: Ավելի կարևոր է, որ Կենտրոնական Ասիայի երկրները ներգրավված են Ռուսաստանի տարածաշրջանային ինտեգրման նախագծերում՝ ԵԱՏՄ, ՀԱՊԿ: Պեկինի համար Կենտրոնական Ասիա տարածաշրջանի կարևորությունը պայմանավորված է մի քանի գործոնով: Նախ, Մինցցյանի խնդիրը: Չինաստանը ցանկանում է պաշտպանել Մինցցյանը հնարավոր ապակայունացումից՝ այն դարձնելով հարուստ և կայուն շրջան՝ կենտրոնանալով տնտեսական զարգացման վրա: Այդ է պատճառը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Չինաստանը կարևորում է Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի պետությունների հետ համագործակցությունը՝ հույս ունենալով, որ առևտրի ծավալի աճը կհանգեցնի բարգավաճման, հետևաբար նաև, Միցցյան նահանգի կայունացման: Մեկ այլ գործոն, որը Կենտրոնական Ասիան դարձնում է կարևոր տարածաշրջան Չինաստանի համար, անցանկալի գաղափարախոսությունների, ինչպիսիք են լիբերալ ժողովրդավարությունը, իսլամական ծայրահեղականությունը, Չինաստանի հնարավոր ներթափանցման կանխումն է: Այդ հարցում Պեկինը կարող է հույս դնել Կենտրոնական Ասիայի հանրապետությունների առաջնորդների վրա: Կենտրոնական Ասիայի էներգետիկ ռեսուրսների հասանելիությունը և դրանց աղբյուրների դիվերսիֆիկացիայի ապահովումը հաջորդ կարևոր գործոնն է տարածաշրջանում Չինաստանի համար: Ռուսաստանի՝ որպես էներգետիկ մատակարարի անհուսալիությունը Չինաստանին ստիպում է մեծացնել իր ներգրավվածությունը Ղազախստանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում:<sup>29</sup>

Կենտրոնական Ասիայում ԱՄՆ շահերը կարելի է դիտարկել երեք ժամանակաշրջանների համատեքստում: Առաջին ժամանա-

<sup>29</sup> **Lubina M.**, Russia and China A political marriage of convenience – stable and successful, Toronto, Barbara Budrich, 2017, pp. 233–261.

կահատվածում, որն ընդգրկում է Խորհրդային Միության փլուզումից մինչև 9/11-ի ահաբեկչությունը, ԱՄՆ-ն ուներ երեք հիմնական առաջնահերթություններ. 1) ապահովել խորհրդային զանգվածային ոչնչացման զենքի ժառանգության անվտանգությունը 2) օգնել Կենտրոնական Ասիայի երկրներին պաշտպանել իրենց նոր ձեռք բերած ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը՝ ընդդեմ Ռուսաստանի նեոհիմպերիալիզմի հնարավոր վերականգման 3) վերջ տալ Ռուսաստանի մենաշնորհին Կենտրոնական Ասիայի նավթի և գազի խողովակաշարերի և տարանցիկ ուղիների նկատմամբ՝ որպես տարածաշրջանի՝ Ռուսաստանից անկախության ապահովման միջոց: Երկրորդ ժամանակահատվածը հաջորդեց 9/11-ին, որի արդյունքում ռազմական և անվտանգային նկատառումները ավելի կարևոր գործոններ դարձան ԱՄՆ քաղաքականության համար: Ներկայումս, մինչ ԱՄՆ-ն անցնում է Աֆղանստանում ԱՄՆ մարտական ուժերի էապես ավելի փոքր դերակատարության, իսկ Ռուսաստանն ու Չինաստանը պատրաստակամություն են հայտնում ընդլայնել իրենց ազդեցությունը տարածաշրջանում, Կենտրոնական Ասիայի երկրները ձգտում են ավելի շատ արևմտյան ներգրավվածության՝ զսպելու ռուսական և չինական ձգտումները: Այս նկատառումներն են հիմք դարձել Կենտրոնական Ասիայի նկատմամբ ԱՄՆ նոր քաղաքականության մշակման հարցում:<sup>30</sup>

Կենտրոնական Ասիայի կարևորությունը ԱՄՆ-ում գիտակցում էին դեռ 1999թ., երբ սենատոր Սեմ Բրաունբեքը, փորձելով առավել մեծ ուշադրություն հրավիրել Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի վրա, ներկայացրել էր «Մետաքսի ճանապարհ» օրինագիծը, որը, ըստ էության, ամերիկյան «Նոր մետաքսի ճանապարհ» նախագիծն էր: Նմանատիպ օրինագիծ շրջանառվում էր Ներկայացուցիչների պալատում: Սենատոր Բրաունբեքը շեշտել էր, որ Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի պետությունները «գտնվում են համաշխարհային ուժերի կիզակետում, որոնք փոձում են նրանց վերահսկողության ներքո պահել» և այդ ուժերին հակազդելու

<sup>30</sup> Rumer E., Sokolsky R., Stronski P., U.S. Policy Toward Central Asia 3.0., Carnegie Endowment for International Peace, 2016, January, pp. 3-4.

համար ԱՄՆ-ն պետք է շեշտը դնի այդ տարածաշրջանի ժողովրդավարացման, ազատ շուկայական տնտեսության ստեղծման, էներգետիկայի և առևտրի զարգացման վրա՝ խրախուսելով իրենց անկախությունը և արևմտամետ ուղղվածությունը: Մետաքսի ճանապարհ օրինագծի գաղափարները տեղ գտան մեկ այլ ակտում («H.R.3194 - Consolidated Appropriations Act, 2000»), որը օրենքի ուժ ստացավ 1999թ. նոյեմբերի 29-ին:<sup>31</sup> 2011թ. պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հայտարարեց ԱՄՆ-ի «Նոր մետաքսի ճանապարհ» նախագծի մասին: Քլինթոնը Հնդկաստանի Չենայ քաղաքում իր ելույթի ժամանակ նշել էր. «պատմականորեն, Հարավային և Կենտրոնական Ասիայի երկրները փոխկապակցված են եղել միմյանց և մայրցամաքի մնացյալ մասի հետ «Մետաքսի ճանապարհ» կոչվող տարածված առևտրային ցանցի միջոցով... Եկեք միասին աշխատենք՝ ստեղծելու «Նոր մետաքսի ճանապարհ»... Դա նշանակում է կառուցել ավելի շատ երկաթգծեր, մայրուղիներ, էներգետիկ ենթակառուցվածքներ, ինչպես առաջարկվող այն խողովակաշարը, որն անցնելու է Թուրքմենստանով, Աֆղանստանով և Պակիստանով մինչև Հնդկաստան... Դա, անշուշտ, նշանակում է ապրանքների և մարդկանց ազատ հոսքի նկատմամբ բյուրոկրատական խոչընդոտների և այլ արգելքների վերացում»:<sup>32</sup>

Կենտրոնական Ասիայում Չինաստանին ԱՄՆ հակազդեցության գործիք է «C5+1» ձևաչափը, որն ընդգրկում է Կենտրոնական Ասիայի 5 երկրները և ԱՄՆ-ն: 2015թ. սեպտեմբերի 27-ին, Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի ընթացքում պետքարտուղար Ջոն Քերին հանդիպեց Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի արտաքին գործերի նախարարների հետ հիմնելու համար նոր՝ «C5+1» ձևաչափը: Որպես երկխոսության այս հարթակի առաջին դրսևորում՝ Քերին նոյեմբերի սկզբին շրջայց իրականացրեց Կենտրոնական Ասիայով: Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում կայացած «C5+1» հանդիպումը տեղի ունեցավ

<sup>31</sup> **Nichol J.**, Central Asia's Security: Issues and Implications for U.S. Interests, Congressional Research Service, 2010, March 11, p. 50.

<sup>32</sup> Remarks on India and the United States: A Vision for the 21st Century, U.S. Department of State, July 20, 2011, <https://2009-2017.state.gov/secretary/20092013clinton/rm/2011/07/168840.htm>, (17.07.2020).

համաշխարհային աշխարհաքաղաքական տուրբուլենտության համատեքստում, որը բարձրացրել էր Կենտրոնական Ասիայի դերը ԱՄՆ-ի համաշխարհային ռազմավարության մեջ:<sup>33</sup>

«C5+1» հարթակը ԱՄՆ-ին հնարավորություն տվեց ստեղծել բարձր մակարդակի ներգրավ-վածության շրջանակներ նորանկախ տարածաշրջանի հետ: Իսկ 2020թ. փետրվարին ԱՄՆ-ն հայտարարեց Կենտրոնական Ասիայի 2019-2025թթ. նոր ռազմավարության մասին: Փաստաթուղթն արտացոլում էր Թրամփի վարչակազմի ազգային անվտանգության ռազմավարության մեջ դրված տրամաբանությունը: Ռազմավարությամբ սահմանված նպատակների թվում են Կենտրոնական Ասիայի պետությունների ինքնիշխանությանը և անկախությանը նպաստելն ու ամրապնդելը թե՛ անհատական մակարդակում, թե՛ տարածաշրջանային, ահաբեկչության սպառնալիքների նվազեցումը Կենտրոնական Ասիայում, Աֆղանստանում կայունությունն ընդլայնումն ու պահպանումը: Այնտեղ չկա ուղիղ մատնանշում այն մասին, որ նրանք ցանկանում են հակազդել Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում չինական ազդեցությանը, այնուամենայնիվ, այդ մտադրությունն ակնհայտ է դառնում ռազմավարության մեջ այնպիսի նախագծերի ներառմամբ, ինչպիսիք են «CASA-1000», Լապիս Լազուլի տրանսպորտային միջանցքը:<sup>34</sup> Այդ նախագծերի հիմնական նպատակը Կենտրոնա-կան Ասիա տարածաշրջանի, Աֆղանստանի և Եվրոպայի միջև կապի ապահովումն է՝ հարևան տերությունների ազդեցության նվազեցման և այլ երկրների հետ համագործակցության շրջանակների ընդլայնման նպատակով, բացի այդ, ինչպես նշված է ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության մեջ, այս ամենի միջոցով զարգացնելով «դիմացկունությունը հակառակորդի գերիշխանության դեմ»:<sup>35</sup> Չինաստանը լուրջ ազդեցություն է շարունակում ձեռք բերել ոչ միայն Կենտրոնական Ասիայում, այլև Աֆրիկայում: Դեռևս 2009թ.

<sup>33</sup> **Tolipov F.**, Pluses and minuses of the C5+1 format, The Central Asia-Caucasus Analyst, November 13, 2015 [www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13300-pluses-and-minuses-of-the-c5%201-format.html](http://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13300-pluses-and-minuses-of-the-c5%201-format.html), (17.07.2020).

<sup>34</sup> US Central Asia Strategy 2019-2025, U.S. Department of State, February 5, 2020, [www.state.gov/united-states-strategy-for-central-asia-2019-2025-advancing-sovereignty-and-economic-prosperity/](http://www.state.gov/united-states-strategy-for-central-asia-2019-2025-advancing-sovereignty-and-economic-prosperity/), (17.07.2020)

<sup>35</sup> National Security Strategy..., Op. cit.



Չինաստանը գերազանցեց ԱՄՆ-ին՝ դառնալով Աֆրիկայի խոշորագույն առևտրային գործընկերը: Երկկողմ առևտրային համաձայնագրեր են ստորագրվել մայրցամաքի ավելի քան 40 երկրների հետ: 2000թ. Աֆրիկայի հետ Չինաստանի առևտուրը կազմել է 10 միլիարդ դոլար: Ըստ Չինաստան-Աֆրիկա հետազոտական նախաձեռնության (CARI), մինչև 2014 թվականը այն աճել էր մինչև 220 միլիարդ դոլար:<sup>36</sup>

Աֆրիկայում Չինաստանի փափուկ ուժի քաղաքականության մի մասն է կազմում տարածաշրջանին օգնության տրամադրումը: Օրինակ 2015թ. նախագահ Սին խոստացավ 5 տարվա ժամանակահատվածում Աֆրիկյան միությանը տրամադրել 100 միլիոն դոլարի ռազմական օգնություն՝ աջակցելու տարածաշրջանում խաղաղապահ նախաձեռնություններին: Դրանով իսկ մեծանում է Չինաստանի դերը Աֆրիկայում՝ որպես խաղաղապահ գորքերին աջակցող: Պատահական չէ, որ 2017թ. վերջին հենց աֆրիկյան մայրցամաքում՝ Ջիբութիում, Չինաստանը հիմնեց իր երկրից դուրս առաջին ռազմաբազան: Դա առաջ բերեց ԱՄՆ քաղաքականության մշակողների անհանգստությունը՝ հաշվի առնելով տարածաշրջանում ԱՄՆ ռազմավարական շահերը և ամերիկյան ռազմաբազային չինական ռազմաբազայի մոտ լինելը:<sup>37</sup> Ռազմական ոլորտում Չինաստանի ազդեցության աճի մեկ այլ վկայություն է այն, որ ռազմական բյուջեի մեծացման և ռազմական արդյունաբերության զարգացման ոլորտում, 2020թ. Չինաստանը զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը աշխարհում՝ զիջելով միայն ԱՄՆ-ին և Ռուսաստանին:<sup>38</sup>

Ավելին, ԱՄՆ-ն, հաշվի առնելով Չինաստանի ազդեցությունը համաշխարհային անվտանգության համակարգում միջուկային կարողությունները, Պեկինին պարբերաբար հրավիրում է մասնակցելու ռուս-ամերիկյան միջուկային բանակցություններին, ինչին Պեկինը մշտապես բացասական պատասխան է տվել: Նման օրինակ է

<sup>36</sup> Eom J., Brautigam D., Benabdallah L., The Path Ahead: The 7th Forum on China-Africa Cooperation, *China-Africa Research Initiative*, 2018, 1, 1-10.

<sup>37</sup> China's Engagement in Djibouti, Congressional Research Service, Version 3, September 4, 2019, 2 p.

<sup>38</sup> China Military Strength, GFP Strength in Numbers, 2020, [https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.asp?country\\_id=china](https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.asp?country_id=china), (19.07.2020).

հունիսի 11-ին Չինաստանի ԱԳՆ խոսնակի հայտարարությունը, որ «Չինաստանի միջուկային հզորությունը նույն մեծության չէ, ինչ ԱՄՆ-ինը և Ռուսաստանինը...միջուկային խոշորագույն զինանոցների տերերը միջուկային զինաթափման հարցում ունեն հատուկ և առաջնային պարտականություններ... Հաշվի առնելով ներկայիս հանգամանքները, ԱՄՆ-ն պետք է դրականորեն արձագանքի «New START» պայմանագրի երկարաձգմանը Ռուսաստանի կոչին և հետագայում կտրուկ կրճատի իր միջուկային զենքերի պաշարները՝ պայմաններ ստեղծելով միջուկային զենքի այլ պետությունների համար միանալու միջուկային զինաթափման բազմակողմ բանակցություններին»:<sup>39</sup> Այդ հայտարարությունը վկայում է այն մասին, որ Չինաստանը, խուսափելով մաս կազմել միջուկային զենքի վերահսկման ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև պայմանագրին, չի ցանկանում սահամանափակել իր միջուկային հզորությունները ԱՄՆ-ի և Ռուսաստանի հզորությունների մակարդակին հասցնելու հնարավորությունը:

Երկու երկրների հարաբերությունների նախկին հետազիծը փոխելու համար Թրամփի վարչակազմը որդեգրել է միակողմանի, պրոտեկցիոնիստական, «ԱՄՆ-ն առաջինը» գրոյական արդյունքով խաղի քաղաքականություն: Այդ մոտեցումը հատկապես նկատելի է փոխնախագահ Մայք Փենսի 2018թ. հոկտեմբերի 4-ի ելույթի ժամանակ, որով ակնհայտ է դառնում, որ ԱՄՆ-ն մտադիր է դիմադրել Չինաստանին, մինչև վերջինս չփոխի իր մոտեցումները մի շարք հարցերի շուրջ, ինչպիսիք են խտրական առևտրային խոչընդոտները, տեխնոլոգիաների հարկադրական տեղափոխումը, Չինաստանում մարդու իրավունքների հետ կապված խնդիրները, Թայվանի և Հարավսիինական ծովի հետ կապված խնդիրները:<sup>40</sup>

<sup>39</sup> Foreign Ministry Spokesperson Hua Chunying's Regular Press Conference on June 11, 2020, Ministry of Foreign Affairs of the People's Republic of China, [https://www.fmprc.gov.cn/mfa\\_eng/xwfw\\_665399/s2510\\_665401/2511\\_665403/t187995.shtml](https://www.fmprc.gov.cn/mfa_eng/xwfw_665399/s2510_665401/2511_665403/t187995.shtml), (19.07.2020).

<sup>40</sup> **Dollar D., Hass R., Bader J.**, Assessing U.S.-China relations 2 years into the Trump presidency, Brookings, January 15, 2019, <https://www.brookings.edu/blog/order-from-chaos/2019/01/15/assessing-u-s-china-relations-2-years-into-the-trump-presidency/>, (19.07.2020).

«ԱՄՆ-ն առաջինը» քաղաքականության համատեքստում է անհրաժեշտ դիտարկել ԱՄՆ-Չինաստան առևտրային պատերազմները: Դեռ մինչ իր նախագահությունը՝ նախընտրական քարոզարշավի ժամանակ, նախագահ Թրամփը հստակ ներկայացրեց իր պատկերացումները Չինաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների հետագա ընթացքի մասին՝ մեղադրելով վերջինիս սեփական արժույթն իր արտահանումներն ավելի մրցակցային դարձնելու համար հմտորեն օգտագործելու մեջ. այն է՝ Չինաստանն իր արժույթն անբնականորեն ցածր մակարդակի վրա է պահում՝ խթանելու արտահանումը:<sup>41</sup> Վերոնշյալի արդյունքում սկիզբ առավ ԱՄՆ-Չինաստան առևտրային պատերազմ: Դոնալդ Թրամփի կողմից չինական ապրանքների վրա տարիֆներ սահմանելու առաջնային պատճառներից մեկն առևտրային պակասորդը նվազեցնելն էր: 2017թ. ԱՄՆ-ի առևտրի ծավալը Չինաստանի հետ կազմել էր 710 միլիարդ դոլար, որից արտահանումը՝ 129.9 միլիարդ դոլար, իսկ ներկրումը՝ 505.5 միլիարդ դոլար: Այսպիսով, 2017թ. ԱՄՆ առևտրի պակասորդը Չինաստանի հետ կազմել էր 375.6 միլիարդ դոլար, որը 8.2% (28.6 միլիարդ դոլար) ավելի էր, քան 2016թ.:<sup>42</sup>

Սկսած 2018թ.-ից ԱՄՆ և Չինաստանը այս առևտրային պատերազմի շրջանակում միմյանց ապրանքների նկատմամբ փուլային տարիֆներ են սահմանել՝ վնասելով միմյանց տնտեսություններին: Թրամփը ձգտում էր լուծել Չինաստանի հետ «անարդար» առևտրային պրակտիկան և նոր առևտրային համաձայնագիր ստորագրել՝ ընթացող բանակցությունների արդյունքում:<sup>43</sup> ԱՄՆ-ի կողմից չինական ապրանքների վրա սահմանված տարիֆների ընհանուր ծավալը մինչև օրս կազմում է 550 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ

<sup>41</sup> Trump accuses China of 'raping' US with unfair trade policy, BBC News, May 2, 2016, <https://www.bbc.com/news/election-us-2016-36185012>, (21.07.2020).

<sup>42</sup> The People's Republic of China, Office of the United States Trade Representative, <https://ustr.gov/countries-regions/china-mongolia-taiwan/peoples-republic-china#>, (21.07.2020).

<sup>43</sup> US & China: Tariff Impact Report August 2018, The Freedomia Group, 2018, pp. 4-8.

Չինաստանի կողմից ամերիկյան ապրանքների վրա՝ 185 միլիարդ ԱՄՆ դոլար:<sup>44</sup>

Ընթացող բանակցությունների արդյունքում երկու երկրների միջև թեև 2020թ. հունվարի 15-ին ստորագրվեց առևտրի համաձայնագրի առաջին փուլը, այնուամենայնիվ այդ ժամանակից սկսած ԱՄՆ հարաբերությունները Չինաստանի հետ էլ ավելի վատթարացան կապված կորանավիրուսի, Հոնկոնգում քաղաքական ազատության հետ կապված իրավիճակի և Սինցզյան նահանգում ույղուր մուսուլմանների ձերբակալությունների հետ: Թրամփն իր հերթին հայտարարել է, որ «առևտրային համաձայնագիրը ավելի քիչ նշանակություն ունի իր համար այժմ, քան այն կնքելու ժամանակ»:<sup>45</sup> Այսպիսով, հաշվի առնելով հարաբերությունների սրումը՝ երկու երկրների միջև ընթացող առևտրային պատերազմը կարող է նոր թափ առնել:

### Չինաստանի ներքին խնդիրները՝ որպես զենք ԱՄՆ ձեռքում

ԱՄՆ-Չինաստան ռազմավարական մրցակցության ոլորտում մեծ տերությունների վերսկսված մրցակցության մեկ այլ հարթակ է Հարավչինական ծովը: Այստեղ ԱՄՆ-Չինաստան մրցակցությունը կազմում է Թրամփի վարչակազմի՝ Չինաստանի նկատմամբ առավել հակամարտային մոտեցման և ազատ և բաց Հնդա-խաղաղ-օվկիանոսյան տարածաշրջանի կառուցման քաղաքականության մաս: ԱՄՆ մեծագույն մտահոգությունը դիտարկվում է ոչ թե Հարավչինական ծովի հակամարտությանը լուծում գտնելը, այլ չինական աճող ազդեցությանը հավասարակշռելը:<sup>46</sup> Վերջին տարիների ընթացքում Չինաստանի կողմից արհեստական կղզիների կառուցման ակտիվ աշխատանքը, ռազմաբազաների կառուցումը, ինչպես նաև իր ծովային

<sup>44</sup> Wong D., Koty A., The US-China Trade War: A Timeline, China Briefing, July 22, 2020, <https://www.china-briefing.com/news/the-us-china-trade-war-a-timeline/>, (21.07.2020).

<sup>45</sup> **Best P.**, Trump says U.S.-China 'trade deal means less to me now' than when he signed it, Fox Business, July 23, 2020, <https://www.foxbusiness.com/economy/trump-u-s-china-trade-deal-means-less-to-me-now-than-when-i-signed-it>, (21.07.2020).

<sup>46</sup> **Alexandre V., Teixeira G.**, Op. cit.

ուժերի կողմից Չինաստանի պահանջների հաստատումը ընդդեմ տարածաշրջանային հարևանների, ինչպես օրինակ Ֆիլիպինների և Վիետնամի, մեծացրել են անհանգստություններն, ըստ որոնց՝ Չինաստանը ստանձնում է արդյունավետ վերհսկողություն Հարավչինական ծովի նկատմամբ, որը ռազմավարական, քաղաքական և տնտեսական կարևորություն ունի ԱՄՆ և իր դաշնակիցների ու գործընկերների համար:<sup>47</sup>

ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնական դիրքորոշումը՝ կապված Հարավչինական ծովի հետ, ներկայացվել է պետքարտուղար Պոմպեոյի 2020թ. հուլիսի 13-ի հայտարարության մեջ, որտեղ Չինաստանի ձգտումներն իր կամքը տարածաշրջանում միակողմանիորեն պարտադրելու հարցում, հատկապես վերջինիս «9 կետից բաղկացած սահմանային գծով» ներկայացվող պահանջը իրավական հիմքից զուրկ է դիտարկվում: 2016թ. հուլիսի 12-ին կայացված միաձայն որոշմամբ Արբիտրաժային տրիբունալը՝ հիմնված 1982-ի «Ծովային իրավունքի մասին կոնվենցիայի» (չնայած ԱՄՆ-ն ինքը չի վավերացրել կոնվենցիան), որին անդամ պետություն է Չինաստանը, մերժել է Չինաստանի ծովային պահանջները՝ համարելով, որ դրանք ոչ մի հիմք չունեն միջազգային իրավունքում: Տրիբունալը գրեթե բոլոր պահանջների հարցով հոգուտ Ֆիլիպինների որոշում կայացրեց: Պոմպեոյի խոսքերով՝ ԱՄՆ-ը «միջազգային հանրության հետ կանգնած է պաշտպանելու ծովերի ազատությունը և հարգելու ինքնիշխանությունը, և մերժում է Հարավչինական ծովում կամ էլ ավելի լայն տարածաշրջանում «ուժը ծնում է իրավունք» սկզբունքը պարտադրելու ցանկացած ճնշում»:<sup>48</sup>

Հուլիսի 13-ին ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն հայտնեց ԱՄՆ ամենակոշտ դիրքորոշումը կապված Հարավչինական ծովում Չինաստանի կողմից տարածքների յուրացման հետ՝ հայտարարելով, որ Չինաստանի չափազանցված ծովային պահանջները, ինչպես նաև իր առավել փոքր հարևաններին ահաբեկելը «ապօրինի է»: Մա

<sup>47</sup> U.S.-China Strategic Competition in South and East China Seas: Background and Issues for Congress, Congressional Research Service, June 23, 2020, p. 2.

<sup>48</sup> **Pompeo M.**, U.S. Position on Maritime Claims in the South China Sea, U.S. Department of State, July 13, 2020 <https://www.state.gov/u-s-position-on-maritime-claims-in-the-south-china-sea/>, (22.07.2020).

տարբերվում էր մինչ այդ առավել դիվանագիտական և զգուշավոր հայտարարություններից, ինչը կարող է ճանապարհի հարթել Չինաստանի դեմ ԱՄՆ առավել կոշտ ռեպրեսալիաների համար: Ի պատասխան Չինաստանի դեսպանատան խոսնակը կոչ արեց ԱՄՆ-ին վերջ տալ տարածաշրջանային խաղաղությունն ու կայունությունը խաթարելու և վնասելու փորձերին: Ինչ-որ առումով ամերիկյան այս նոր քաղաքականությունը Չինաստանի՝ Հարավ-չինական ծովը գրեթե ամբողջությամբ ընդգրկող «9 կետից բաղկացած սահմանային գծի» քաղաքականության առաջին լիարժեք պատասխանն է: Համաձայն պետքարտուղար Պոմպեոյի՝ «Հարավ-չինական ծովում 9 կետից բաղկացած սահմանային գծի պահանջի առումով Չինաստանը համապատասխան ոչ մի իրավական հիմք չի ներկայացրել՝ այդ քաղաքականության 2009թ. հայտարարումից ի վեր»:<sup>49</sup> Չինական պաշտոնական դիրքորոշման համաձայն՝ ԱՄՆ այդ հայտարարությունը հաշվի չի առնում Հարավչինական ծովի հետ կապված պատմական փաստերը և խախտում է որևէ կողմի չաջակցելու ԱՄՆ կառավարության հանրային հանձնառությունը: Ըստ չինական կողմի՝ Հարավչինական ծովում Չինաստանի ինքնիշխանությունը, իրավունքներն ու շահերը ձևավորվել են պատմական երկարատև ժամանակաշրջանի ընթացքում և համապատասխանում են միջազգային իրավունքին: Միննույն ժամանակ ԱՄՆ-ն Հարավչինական ծովում ցանկանում է քառս ստեղծել, որպեսզի դրանից օգուտներ քաղի:<sup>50</sup>

Չինաստանին հակազդելու հարցում ԱՄՆ ձեռքում մեկ այլ կարևոր գործիք են Չինաստանի ներքին խնդիրները: Այս խնդիրներից մեկը Թայվանի հարցն է: Այս առումով շրջադարձային եղավ 1972թ. ԱՄՆ նախագահ Նիքսոնի այցը Չինաստան: Այցի ավարտին երկու կողմերը հրապարակեցին Շանհայի կոմյունիկեն, որում երկու երկրները համաձայնեցին, որ բոլորի շահերից է բխում շարժվել

<sup>49</sup> **Quinn C.**, The U.S. Declared China's South China Sea Claims 'Unlawful.' Now What? Foreign Policy, July 14, 2020, <https://foreignpolicy.com/2020/07/14/the-u-s-declared-chinas-south-china-sea-claims-unlawful-now-what/>, (22.07.2020).

<sup>50</sup> Foreign Ministry Spokesperson Zhao Lijian's Regular Press Conference on July 14, 2020, Ministry of Foreign Affairs of the People's Republic of China, [https://www.fmprc.gov.cn/mfa\\_eng/xwfw\\_665399/s2510\\_665401/2511\\_665403/t1797731.shtml](https://www.fmprc.gov.cn/mfa_eng/xwfw_665399/s2510_665401/2511_665403/t1797731.shtml), (22.07.2020).

բարելավվող դիվանագիտական հարաբերությունների ուղղությամբ: Ինչ վերաբերում է Թայվանին, կոմյունիկեում արձանագրվում է, որ ԱՄՆ-ն չի վիճարկում «Մեկ Չինաստան»-ի գաղափարը և վերահաստատում, որ իր շահերից է բխում Թայվանի ինդորի խաղաղ լուծումը հենց չինացիների կողմից:<sup>51</sup>

ԱՄՆ հաջորդ նախագահ Կարտերի օրոք 1979թ. ստորագրվեց «Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին կոմյունիկեն», որով ԱՄՆ կառավարությունը հաստատում էր, որ ընդունում է «Մեկ Չինաստան» դիրքորոշումը: «Մեկ Չինաստան» քաղաքականությունը ենթադրում է, որ գոյություն ունի միայն մեկ Չինաստան՝ չնայած երկու մրցակցող կառավարությունների՝ ՉԺՀ-ի և Չինաստանի Հանրապետության (Թայվան), գոյությանը: Կոմյունիկեով հաստատվեց, որ ԱՄՆ-ն Թայվանի ժողովրդի հետ պահպանելու է մշակութային, առևտրային և այլ ոչ քաղաքական հարաբերություններ: Այսպիսով, Չինաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար ԱՄՆ հարաբերությունները Թայվանի հետ սահմանափակվեցին ոչ պաշտոնական մակարդակով:<sup>52</sup> Նույն տարում Կոնգրեսն ընդունեց «Թայվանի հետ հարաբերությունների մասին ակտը», որով սահմանվում էր երկու կողմերի միջև համագործակցության շրջանակը՝ առանց խախտելու «Մեկ Չինաստան» քաղաքականությունը:<sup>53</sup> Թայվանի հետ ոչ պաշտոնական հարաբերությունները պահպանվում են Թայվանի ամերիկյան ինստիտուտի՝ մասնավոր, շահույթ չհետապնդող կորպորացիայի միջոցով, որը իրականացնում է քաղաքացիական և հյուպատոսական ծառայություններ:<sup>54</sup>

<sup>51</sup> **Connors L.**, Analysis of Nixon's Opening of China, Dr David Walker Boise State University, Spring 2007, p. 18.

<sup>52</sup> Joint Communique of the United States of America and the People's Republic of China (Normalization Communique), American Institute in Taiwan, January 1, 1979, <https://www.ait.org.tw/our-relationship/policy-history/key-u-s-foreign-policy-documents-region/u-s-prc-joint-communique-1979/>, (23.07.2020).

<sup>53</sup> Taiwan Relations Act, <https://www.ait.org.tw/our-relationship/policy-history/key-u-s-foreign-policy-documents-region/taiwan-relations-act/>, (23.07.2020).

<sup>54</sup> U.S. Relations with Taiwan, U.S. Department of State, August 31, 2018, <https://www.state.gov/u-s-relations-with-taiwan/>, (23.07.2020).

Նախագահ Թրամփը «Մեկ Չինաստան» քաղաքականության վերաբերյալ բավական հակասական կարծիքներ է արտահայտել: Եթե, 2016թ. դեկտեմբերի 2-ին Թայվանի առաջնորդի հետ զրույցից հետո Թրամփը կասկած է արտահայտում, թե ինչու պետք է ԱՄՆ-ն պարտավորված լինի հետևել «Մեկ Չինաստան» քաղաքականությանը, եթե Չինաստանի հետ չեն եկել համաձայնության այլ հարցերի, այդ թվում՝ առևտրի խնդրի շուրջ, ապա 2017թ. փետրվարին՝ պաշտոնը ստանձնելուց հետո, Չինաստանի նախագահի հետ հեռախոսազրույցում Թրամփը համաձայնեց «հարգել այդ քաղաքականությունը»: Շատ հավանական է, որ հետագայում օգտագործվի Թայվանի գործոնը Չինաստանի դեմ. նման օրինակ է «Թայվանի ճամփորդության ակտը», որը թույլ է տալիս բարձրաստիճան հանդիպումներ ԱՄՆ և Թայվանի ղեկավարների միջև:<sup>55</sup> Նախագահի պաշտոնը ստանձնելուց ի վեր Թրամփը վերահաստատեց Թայվանի ռազմավարական նշանակությունը: Ըստ այդմ, 2017թ.-ից սկսած Վաշինգտոնը մեծացրել է Թայվանի հետ անվտանգության՝ հատկապես հակահարկերից շրջապատում համագործակցությունը: Բացի այդ 1.42 միլիարդ սպառազինության վաճառքը 2017թ. դարձավ առաջին նմանատիպ վաճառքը Թրամփի վարչակազմի օրոք:<sup>56</sup>

Թայվանին զենքի վաճառքը կարելի է համարել ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների առավել խնդրահարույց կետերից մեկը: ԱՄՆ-Չինաստան երրորդ՝ 1982թ. կոմյունիկեում նշվում էր, որ Թայվանին զենքի վաճառքի հարցը չի լուծվել բանակցությունների ընթացքում: Միաժամանակ, ԱՄՆ կառավարությունը հաստատում էր, որ չի ձգտում իրականացնել Թայվանին զենքի վաճառքի երկարաժամկետ քաղաքականություն, և որ զենքի վաճառքը ոչ քանակապես, ոչ էլ որակապես չի գերազանցի Չինաստանի և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո վերջին տարիների ընթացքում եղած ծավալը: Ավելին, ԱՄՆ կառավարությունը մտադրություն հայտնեց աստիճանաբար կրճատել Թայվանին զենքի վաճառքը, որը ժամանակի ընթացքում կբերի

<sup>55</sup> **Weixing Hu**, Trump's China Policy and Its Implications for the "Cold Peace" across the Taiwan Strait, *China Review*, August 2018, **18**, 3, 61-88.

<sup>56</sup> **Gang L., Wenxing Zh.**, Does Taiwan Matter to the United States? Policy Debates on Taiwan Abandonment and Beyond, *China Review*, August 2018, **18**, 3, 177-206.



վերջնական լուծման:<sup>57</sup> Հենց «Թայվանի հետ հարաբերությունների մասին ակտում», որպես Թայվանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության տարր, նշվում է պաշտպանական բնույթի զենքի վաճառքի ապահովումը: 2018թ. մեկ այլ ակտում տեղ գտան առավել խիստ ձևակերպումներ, այն է՝ նախագահը պետք է իրականացնի Թայվանին պաշտպանական միջոցների կանոնավոր հատկացումներ՝ Չինաստանից եկող և ապագա սպառնալիքներին պատասխանելու համար:<sup>58</sup> Զենքի վաճառքը, բնականաբար, բացասաբար է ընդունվում Չինաստանում, որի ապացույցներից է Չինաստանի արձագանքը 2019թ. ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից 2 միլիարդ զենքի վաճառքին հավանություն տալուն: Չինաստանի ԱԳՆ խոսնակը նշեց, որ այդ քայլը խստորեն խախտում է «Մեկ Չինաստան» սկզբունքը, և Չինաստան-ԱՄՆ երեք կոմյունիկեները և վնասում է ԱՄՆ-Չինաստան հարաբերությունները:<sup>59</sup>

ԱՄՆ-ն զենքի վաճառքի առումով պնդում է, որ երրորդ կոմյունիկեում չկար հստակ տարբերիվ զենքի վաճառքը դադարեցնելու համար և որ զենքի վաճառքի կրճատումը կախված է Չինաստանի և Թայվանի միջև ռազմական հավասարակշռության պահպանումից: Ավելին, այդ կոմյունիկեն դիտարկվում է որպես քաղաքական փաստաթուղթ, մինչդեռ «Թայվանի հետ հարաբերությունների մասին ակտը» օրենք է:<sup>60</sup>

ԱՄՆ-Չինաստան հարաբերություններում հատկապես 2019-2020թթ. ընթացքում կարևոր ազդեցություն ունի Հոնկոնգը: Իր հատուկ կարգավիճակով՝ արտահայտված «Մեկ երկիր, երկու համակարգ» սկզբունքով, Հոնկոնգը տարբերվում է Չինաստանի խստորեն

<sup>57</sup> Joint Communiqué of the People's Republic of China and the United States of America (August 17, 1982), Embassy of the People's Republic of China in the United States of America, <http://www.china-embassy.org/eng/zmgx/doc/ctc/t946664.htm>, (23.07.2020).

<sup>58</sup> S.2736 - Asia Reassurance Initiative Act of 2018, U.S. Congress, 2018, <https://www.congress.gov/bill/115th-congress/senate-bill/2736/text>, (23.07.2020).

<sup>59</sup> Geng Shuang, Foreign Ministry Spokesperson Geng Shuang's Regular Press Conference, July 9, 2019, [https://www.fmprc.gov.cn/mfa\\_eng/xwfw\\_665399/s2510\\_665401/2511\\_665403/t1679792.shtml](https://www.fmprc.gov.cn/mfa_eng/xwfw_665399/s2510_665401/2511_665403/t1679792.shtml), (23.07.2020).

<sup>60</sup> U.S. Conventional Arms Sales to Taiwan 1980-2010, Arms Control Association, October 2012, <https://www.armscontrol.org/factsheets/taiwanarms>, (23.07.2020).

վերահսկվող տնտեսական և ֆինանսական համակարգից, որը ներառում է ներկրման մաքսատուրքեր, ավելացված արժեքի հարկեր, կապիտալի վերահսկողություն և աշխատուժի սահմանափակ շարժունակություն:<sup>61</sup> ԱՄՆ հարաբերությունները Հոնկոնգի հետ կարգավորվում են «1992թ. Հոնգկոնգի մասին քաղաքականության ակտով»: ԱՄՆ-ն դիտարկում է Հոնկոնգը որպես հատուկ ինքնավար շրջան՝ քաղաքական, տնտեսական, առևտրային և այլ ոլորտներում, քանի դեռ վերջիս մնում է «բավարար չափով ինքնավար» և ազատում մի շարք տուրքերից, որոնք կիրառվում են Չինաստանի նկատմամբ:<sup>62</sup>

Հոնկոնգում իրավիճակը սրվեց 2019թ., երբ ապրիլին ներկայացվեց մի ակտ, որը թույլ կտար մայրցամաքային Չինաստանին արտահանանել քրեական հանցագործության մեջ մեղադրվողներին: Մյան հետևեցին հարյուրհազարավոր մասնակիցներով ցույցերը և թեև օրինագիծն ի վերջո հեռացվեց, ցույցերը շարունակվեցին: Պեկինի իշխանությունները մասնակիցներին որակել էին վտանգավոր անջատողականներ և մեղադրել, որ աջակցություն են ստանում օտարերկրյա ուժերից:<sup>63</sup> Ընթացող իրադարձություններին հետևեց ԱՄՆ կոշտ արձագանքը: Նոյեմբերի 27-ին ԱՄՆ նախագահը ստորագրեց «Հոնկոնգի մարդու իրավունքների և ժողովրդավարության 2019թ. ակտը»: Այս ակտն աջակցություն ստացավ ինչպես դեմոկրատների, այնպես էլ հանրապետականների կողմից և նախատեսում էր տարեկան զեկույց՝ կապված հատուկ կարգավիճակի համապատասխանության, ինչպես նաև ԱՄՆ օրենքի խախտմամբ Հոնկոնգից վերաարտահանումների հետ: Ակտով սահմանվում էր նաև ընթացակարգ, որ նախագահը պատժամիջոցներ և ճամփորդական սահմանափակումներ կարող էր մտցնել նրանց նկատմամբ, ովքեր պատասխանատու են Հոնկոնգում ցանկացած անձի ապօրինի

<sup>61</sup> **Nguyen T.**, Hong Kong Policy Paralysis Erodes Special Position to Benefit of Peers, Carnegie Endowment for International Peace, September 19, 2019, <https://carnegieendowment.org/2019/09/19/hong-kong-policy-paralysis-erodes-special-position-to-benefit-of-peers-pub-79895>, (25.07.2020).

<sup>62</sup> **Michael M.**, Hong Kong: Recent Developments and U.S. Relations, Congressional Research Service (CRS), Version 5, January 6, 202.

<sup>63</sup> Hong Kong formally scraps extradition bill that sparked protests, BBC News, 23 October 2019, <https://www.bbc.com/news/world-asia-china-50150853>, (25.07.2020).

արտահանման, կամայական կալանքի կամ խոշտանգումների, ինչպես նաև միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների այլ կոպիտ խախտումների համար:<sup>64</sup>

Իրավիճակը հերթական անգամ սրվեց արդեն 2020թ., երբ Չինաստանն ընդունեց «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքը Հոնկոնգի հատուկ վարչական շրջանում ազգային անվտանգության ապահովման մասին»: Անհապաղ արձագանք եղավ ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից, ուր այդ օրենքը որակվում էր որպես Հոնկոնգի ազգային անվտանգության «հրեշավոր» օրենսդրություն՝ ուղղված տարածքի ինքնավարության ոչնչացմանը: Պետդեպարտամենտը դրանից մեկ շաբաթ առաջ արդեն իսկ կիրառել էր վիզայի սահմանափակումներ այն պաշտոնյաների նկատմամբ, ովքեր, ըստ իրենց, խարխլում են Հոնկոնգի ինքնավարությունը: Հայտարարվեց նաև պաշտպանական և կրկնակի նշանակության տեխնոլոգիաների արտահանման դադարեցման մասին:<sup>65</sup>

Մրան հետևեց Կոնգրեսի ընդունած «Հոնկոնգի ինքնավարության ակտը»: Այս ակտը ևս ստացավ երկկուսակցական աջակցություն և հուլիսի 14-ին ստորագրվեց ԱՄՆ նախագահի կողմից: Ակտը նախատեսում էր պատժամիջոցների կիրառում այն օտարերկրյա անհատների և կառույցների նկատմամբ, որոնք զգալիորեն աջակցում են Հոնկոնգի ինքնավարության խարխլմանը:<sup>66</sup> Հենց նույն օրը նախագահը հրապարակեց նաև գործադիր հրամանագիր, որով տեղի ունեցածը որակվեց որպես «արտասովոր և բացառիկ սպառնալիք» ԱՄՆ ազգային անվտանգությանը, արտաքին քաղաքականությանն ու տնտեսությանը: Արդյունքում, Հոնկոնգը

<sup>64</sup> S.1838 - Hong Kong Human Rights and Democracy Act of 2019, U.S. Congress, 2019, <https://www.congress.gov/bill/116th-congress/senate-bill/1838>, (25.07.2020).

<sup>65</sup> **Pompeo M.**, On Beijing's Imposition of National Security Legislation on Hong Kong, U.S. Department of State, June 30, 2020, <https://www.state.gov/on-beijings-imposition-of-national-security-legislation-on-hong-kong/>, (25.07.2020).

<sup>66</sup> H.R.7440 - Hong Kong Autonomy Act, U.S. Congress, 2020, <https://www.congress.gov/bill/116th-congress/house-bill/7440/text>, (25.07.2020).

գրկվեց արտոնյալ կարգավիճակից, քանզի դադարեց դիտարկվել որպես «բավարար չափով ինքնավար»:<sup>67</sup>

Չինաստանի մեկ այլ ներքին խնդիրը, որն ԱՄՆ-ն Չինաստանի դեմ միջազգային հարթակներում հաճախ է օգտագործում, Տիբեթի խնդիրն է: ԱՄՆ-ն Տիբեթի հարցով հետաքրքրված չէր մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, որից հետո նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը, ցանկանալով մատակարարման ուղի ստեղծել, նամակ և նվերներ ուղարկեց Դալայ լամային՝ այսպիսով հաստատելով ամերիկյան առաջին կապերը Տիբեթի հետ:<sup>68</sup> Հետագայում նախագահ Բուշը դարձավ առաջին ԱՄՆ նախագահը, ով պաշտոնապես ընդունեց Դալայ Լամային Վաշինգտոնում 1991թ. ապրիլին, իսկ Բուշ կրտսերը, բարձր գնահատանքի արժանացնելով Դալայ լամային, 2006թ. նրան ամենից բարձր քաղաքացիական պատվին արժանացրեց՝ շնորհելով Կոնգրեսի ոսկե մեդալ: Ներկայումս ամերիկյան նախագահները, կաբինետի անդամներն ու կոնգրեսականները կոչ են անում Չինաստանի կառավարությանը երկխոսություն սկսել Դալայ լամայի ներկայացուցիչների հետ և վերջ տալ Տիբեթում մարդու իրավունքների ոտնահարումներին:<sup>69</sup> Նմանօրինակ կոչ ամրագրված է նաև ԱՄՆ Կրոնի միջազգային ազատության հանձնաժողովի ամենամյա զեկույցում, ուր նշված է, որ 2019թ. մայիսին Չինաստանում ԱՄՆ դեսպան Թերի Բրանստադը այցելել է Տիբեթ և հորդորել Չինաստանի առաջնորդներին՝ Դալայ լամայի հետ «հիմնարար երկխոսություն» սկսել:<sup>70</sup>

Տիբեթում ԱՄՆ շահերը հետապնդելու նպատակով ընդունվել են բազմաթիվ օրինագծեր, բանաձևեր և «Տիբեթյան քաղաքակա- նության ակտը 2002թ.», որը պատմական էր և նպատակ ուներ աջակցել

<sup>67</sup> The President's Executive Order on Hong Kong Normalization, White House, July 14, 2020, <https://www.whitehouse.gov/presidential-actions/presidents-executive-order-hong-kong-normalization/>, (25.07.2020).

<sup>68</sup> **Xu G.**, The United States and the Tibet Issue, *Asian Survey*, 1997, **37**, 11, 1062–1077.

<sup>69</sup> **Lhadon T.**, US – China Relations: The normative clause of Tibet, Central Tibetan Administration, <https://tibet.net/us-china-relations-the-normative-clause-of-tibet/>, (26.07.2020).

<sup>70</sup> Annual Report of the U.S. Commission on International Religious Freedom, April 2020, pp. 14–16.

տիրեթցիների ձգտումներին՝ պաշտպանելու իրենց ինքնությունը: Չինաստանն իր հերթին, չփոխելով Տիբեթում իր քաղաքականությունը, մեղադրում է ԱՄՆ-ին Չինաստանի ներքին գործերին միջամտելու մեջ: Չինաստանի նկատմամբ ԱՄՆ-ի մոտեցման փոփոխությունները նկատվում են առևտրային գործարքների փոխադարձությամբ և հատկապես «Տիբեթ փոխադարձ մուտքի մասին ակտով», որը Նախագահ Դոնալդ Թրամփի կողմից օրենքի ուժ է ստացել 2018թ. դեկտեմբերին: Այս ակտին հաջորդեց մեկ այլ օրինագիծ՝ «Տիբեթյան քաղաքականության և աջակցության մասին 2019թ. ակտը», որը հունվարի 28-ին Ներկայացուցիչների պալատը ընդունել է<sup>71</sup> և ներկայացրել Սենատի քննարկմանը:<sup>72</sup>

Հատկանշական է, որ Տիբեթում կրոնի ազատության խնդիրը Վաշինգտոնի հատուկ ուշադրության ներքո է: Վերոնշյալ օրինագիծը հենց ուղղված է Դալայ լամայի իրավահաջորդության խնդրին՝ կոչ անելով Պեկինին հարգել Դալայ լամայի և իր հետևորդների որոշումը՝ նշանակելու իրենց ընտրյալ իրավահաջորդին: Օրինագիծը պատժամիջոցներ և վիզային արգելք է սահմանում ցանակացած չինացի պաշտոնյայի նկատմամբ, ով կմիջամտի Դալայ լամայի իրավահաջորդի ընտրությանը: Միացյալ Նահանգների Կրոնի միջազգային ազատության հանձնաժողովի հանձնակատար Գարի Բաուերի գնահատմամբ՝ այս օրինագիծը ոչ միայն ուժեղ ազդակ է, որով ԱՄՆ-ը սատարում է տիբեթյան բուդդիստ կրոնական առաջնորդներին՝ հաջորդ Դալայ-Լամայի ընտրության հարցում և զգուշացնում, որ կղիտարկի Չինաստանի կառավարության կողմից կրոնական ազատության ցանկացած խախտում:<sup>73</sup>

Ինչ վերաբերում է Չինաստանի Սինցյան նահանգում բնակվող ուլդուր մուսուլման փոքրամասնության նկատմամբ Չինաստանի քաղաքականությանն ԱՄՆ արձագանքին, ապա պետք է նշել, որ ԱՄՆ-ը հետևողականորեն ուսումնասիրում է այդ իրադարձություն-

<sup>71</sup> (H.R.4331/S.2539) H.R.4331 - Tibetan Policy and Support Act of 2019, U.S. Congress, 2019, <https://www.congress.gov/bill/116th-congress/house-bill/4331/text?format=txt&r=3&s=1>, (26.07.2020).

<sup>72</sup> S.2539 - Tibetan Policy and Support Act of 2019, U.S. Congress, 2019, <https://www.congress.gov/bill/116th-congress/senate-bill/2539/text>, (26.07.2020).

<sup>73</sup> **Lhadon T.**, Op. cit.

ները և դրանց կապակցությամբ պարբերաբար հակաչինական օրինագծեր և ակտեր են ընդունվում: 2019թ. հոկտեմբերին ԱՄՆ Մաքսային և սահմանների պաշտպանության գործակալությունը հայտարարեց, որ արգելել է հինգ երկրներից, այդ թվում՝ Չինաստանից այնպիսի ապրանքների բեռնափոխադրումներ, որոնց արտադրության ժամանակ կարող է օգտագործված լինել հարկադիր աշխատանք: Կասկածվում էր, որ Մինցզյանի վերադաստիարակչական ճամբարի հարկադիր աշխատանքն օգտագործվել է այն չինական ապրանքների՝ սպորտային հագուստներ կարելիս, որոնք նախատեսված էին ամերիկյան ընկերության համար: 2019թ. հոկտեմբերին ԱՄՆ Առևտրի դեպարտամենտը հայտարարեց, որ չինական 28 կազմակերպություններ կներառի Արդյունաբերության և անվտանգության բյուրոյի «կառույցների ցուցակում»՝ Արտահանման կառավարման կանոնակարգի ներքո, Մինցզյանում ուլդուրների և այլ թուրք մուսուլմանների դեմ Չինաստանի կողմից մարդու իրավունքների ռոնահարման հետ նրանց կապերի համար: Այս միջոցը ենթադրում է արտոնագրման պահանջների կիրառում՝ նախքան այդ կազմակերպություններին ամերիկյան ապրանքների վաճառքը կամ փոխանցումը: 2020թ. մայիսին Առևտրի դեպարտամենտը ցուցակի մեջ ավելացրեց ևս ինը չինական կառույցներ:<sup>74</sup>

2019թ. հոկտեմբերին Պետդեպարտամենտը հայտարարեց վիզային սահմանափակումների մասին (Ներգաղթի և ազգության մասին ակտով) Չինաստանի կառավարության և Կոմունիստական կուսակցության պաշտոնյաների նկատմամբ, որոնք, ենթադրաբար, պատասխանատու են կամ մեղավոր են Մինցզյան նահանգում ուլդուրների և այլ մահմեդականների կալանքի կամ շահագործման համար:<sup>75</sup> Իսկ 2020թ. հունիսի 17-ին Նախագահ Թրամփը ստորագրեց «Ուլդուրների՝ մարդու իրավունքների քաղաքականության մասին ակտը» (P.L. 116-145): Ակտով վիզային և տնտեսական պատժամի-

<sup>74</sup> Uyghurs in China, Congressional Research Service (CRS), July 13, 2020, Version 38.

<sup>75</sup> U.S. Department of State Imposes Visa Restrictions on Chinese Officials for Repression in Xinjiang, U.S. Department of State, October 8, 2019, <https://www.state.gov/u-s-department-of-state-imposes-visa-restrictions-on-chinese-officials-for-repression-in-xinjiang/>, (28.07.2020).

ջոցներ կկիրառվեն Չինաստանի այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք պատասխանատու են ուլդուրների և այլ մահմեդական փոքրամասնությունների նկատմամբ Սինցզյանում մարդու իրավունքների ոտնահարման համար:<sup>76</sup> Չնայած ուլդուրների նկատմամբ բռնության և ձեռքարկությունների հայտարարություններին՝ Սինցզյան նահանգի պաշտոնյաների և Սինցզյանի նահանգապետի պնդմամբ՝ այդ «մասնագիտական վերապատրաստ-ման կենտրոնները» նպաստում են տարածաշրջանում ահաբեկչության դեմ պայքարին: Բացի այդ, կենտրոններում ուսուցումը ավարտածների մեծ մասը վերաինտեգրվում են հասարակության մեջ և նրանցից ավելի քան 90%-ը գտել է եկամտաբեր աշխատանք:<sup>77</sup> Ուլդուրների հարցում Չինաստանի օգտին կարծիք են արտահայտել մի շարք երկրներ, որի օրինակն է 2019թ. հուլիսի 12-ի նամակը 37 պետությունների (ներառյալ Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ-պետություններ) դեսպանների կողմից ուղղված ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի նախագահին և ՄԱԿ մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարին: Նամակում գովասանքի են արժանացվում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Չինաստանի զգալի ձեռքբերումները, ինչպես նաև բաց լինելն ու թափանցիկությունը, որի շնորհիվ մի շարք դիվանագետներ, միջազգային կառույցի ներկայացուցիչներ և լրագրողներ այցելել են Սինցզյան և այն պատկերը, որին ականատես են եղել վերջիններս, լիովին հակասում է լրատվամիջոցների կողմից տարածվող տեղեկություններին<sup>78</sup>:

2020թ. հուլիսի 9-ին Թրամփի վարչակազմը պատժամիջոցներ կիրառեց Չինաստանի բազմաթիվ պաշտոնատար անձանց նկատմամբ, այդ թվում՝ Կոմկուսի բարձրաստիճան անդամի, կապված ուլդուր մահմեդական փոքրամասնության դեմ մարդու իրավունքների ոտնահարումների հետ: Նույն օրը ԱՄՆ պետքարտուղար Մայք

<sup>76</sup> S.3744 - Uyghur Human Rights Policy Act of 2020, U.S. Congress, 2020, <https://www.congress.gov/bill/116th-congress/senate-bill/3744>, (28.07.2020).

<sup>77</sup> China: Most people in Xinjiang camps have 'returned to society', Al Jazeera, 30 July 2019, <https://www.aljazeera.com/news/2019/07/china-defends-controversial-education-centres-ughurs-190730053648154.html>, (28.07.2020).

<sup>78</sup> HRC41 July 12th Joint Statement on Xinjiang, Human Rights Watch, [https://www.hrw.org/sites/default/files/supporting\\_resources/190712\\_joint\\_counters\\_tatement\\_xinjiang.pdf](https://www.hrw.org/sites/default/files/supporting_resources/190712_joint_counters_tatement_xinjiang.pdf), (28.07.2020).

Պումպեոն հայտարարեց, որ «Միացյալ Նահանգները անտարբեր չի մնա, երբ Չինաստանի Կուսակցության կուսակցությունն իրականացնում է մարդու իրավունքների ոտնահարումներ, որոնք ուղղված են ույղուների, էթնիկ դազախների և փոքրամասնություն կազմող այլ խմբերի անդամների դեմ Մինցզյանում»: Իսկ Չինաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակը, արձագանքելով պետքարտուղարի այդ հայտարարությանը, նշեց, որ Պեկինն իր հերթին պատասխան միջոցներ կձեռնարկի ԱՄՆ համապատասխան ինստիտուտների և անհատների դեմ՝ Մինցզյանին առնչվող հարցերի վերաբերյալ «տխրահոշակ» վարքի համար:<sup>79</sup> Այսպիսով, ԱՄՆ-Չինաստան վատթարացող հարաբերություններին զուգահեռ այդ երկրի ներքին խնդիրները կարևոր խաղաթուղթ են դարձել ԱՄՆ ձեռքում Չինաստանի աճող ազդեցությանը հակազդելու հարցում:

Նախագահ Թրամի վարչակազմը բավական հաճախ էր օգտագործում կրոնի գործոնը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մշակման հարցում: Այն օգտագործվում էր նաև Չինաստանի դեմ: Հատկանշական է, որ 2019թ. դեկտեմբերի 18-ին պետքարտուղարությունը Չինաստանը որակեց «հատուկ մտահոգության երկիր՝ կրոնական ազատության համակարգված ընթացիկ և աղաղակող խախտումների համար»:<sup>80</sup> Մինևույն ժամանակ ԱՄՆ Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովի 2020թ. զեկույցում նշվում է, որ 2019թ. կրոնական ազատության պայմանները Չինաստանում վատթարացել են: Վերոնշյալի համար Հանձնաժողովը Պետդեպարտամենտին առաջարկում էր Չինաստանը որակել որպես «հատուկ մտահոգության երկիր» 2020թ. ևս, ինչպես նաև թիրախային պատժամիջոցներ կիրառել Չինաստանի կառավարության այն գործակալությունների ու պաշտոնյաների նկատմամբ, որոնք պատասխանատու են կրոնի ազատության լուրջ խախտումների

<sup>79</sup> **Verma P., Wong E.**, U.S. Imposes Sanctions on Chinese Officials Over Mass Detention of Muslims, *NY Times*, July 9, 2020, <https://www.nytimes.com/2020/07/09/world/asia/trump-china-sanctions-ughurs.html>, (28.07.2020).

<sup>80</sup> Report on International Religious Freedom: China (Includes Tibet, Xinjiang, Hong Kong, and Macau), U.S. Department of State, 2019, <https://www.state.gov/reports/2019-report-on-international-religious-freedom/china/>, (30.07.2020).



համար.<sup>81</sup> Բացի այդ ԱՄՆ-ն փորձում է կրոնի ազատության հարցը միջազգայնացնել՝ ստեղծելով Կրոնական ազատության միջազգային դաշինքը, որի պաշտոնական մեկնարկը տրվել է 2020թ. փետրվարի 5-ին և ներառում է 29 երկիր:<sup>82</sup> Այս կառույցը ևս ակտիվորեն օգտագործվում է Չինաստանի դեմ, որի վկայությունն են պետքարտուղարի հաճախ հնչեցրած կոշտ գնահատականները Չինաստանում կրոնի ազատության վերաբերյալ, մասնավորապես՝ 2019թ. Կրոնի առաջխաղացման նախարարական համաժողովի ժամանակ Չինաստանի վերաբերմունքը ուղորդների նկատմամբ Պոմպեոն կոչեց «դարի խարան»:<sup>83</sup>

Այսպիսով, թեև ԱՄՆ-ն ունի կրոնի ազատության խնդիրներով զբաղվող ներքին կառույցներ՝ Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովը, և Միջազգային կրոնական ազատության գրասենյակը, ԱՄՆ-ն ստեղծեց մի միջազգային դաշինք, ներգրավելով այլ պետությունների, կրոնական ազատության հարցերով հայտարարություններին և գործողություններին միջազգային մակարդակով լեգիտիմություն հաղորդելու համար, որն այս դեպքում կօգտագործվի Չինաստանին ճնշելու և պարտադրելու որոշակի զիջումների գնալ:

## Եզրակացություն

Գլոբալ գերտերությունը պետք է ունենա առաջնակարգ ռազմաքաղաքական հզորություններ (ժամանակաշրջանի բոլոր չափանիշներին համապատասխան) և տնտեսություն, որ կապահովի նման կարողություններն ու պահանջները: Զիջելով միայն ԱՄՆ-ին և Ռուսաստանին, Չինաստանը շարունակում է աճ ապահովել

<sup>81</sup> Annual Report of the U.S. Commission on International Religious Freedom, April 2020, pp. 14-16.

<sup>82</sup> Senior State Department Official On the Launch of the International Religious Freedom (IRF) Alliance, U.S. Department of State, February 5, 2020, <https://www.state.gov/senior-state-department-official-on-the-launch-of-the-international-religious-freedom-irf-alliance/>, (30.07.2020).

<sup>83</sup> **Pompeo M.**, Secretary of State Michael R. Pompeo Keynote Address at the Ministerial to Advance Religious Freedom, U.S. Department of State, July 18, 2019, <https://www.state.gov/secretary-of-state-michael-r-pompeo-keynote-address-at-the-ministerial-to-advance-religious-freedom/>, (30.07.2020).

ռազմական և ռազմարդյունաբերական ոլորտներում: Չինաստանի զարգացման «թռիչքային հետագիծը» տեմպի նվազման միտում չի դրսևորում: Հակառակը, անգամ կորոնավիրուսի համաշխարհային համաճարակի պայմաններում Չինաստանը շարունակում է նկատելի տնտեսական աճ ապահովել:

Գլոբալ գերտերությանը բնորոշ ակտիվ դերակատարությամբ բոլոր կամ գրեթե բոլոր տարածաշրջանների «անվտանգայնացման» և «ապաանվտանգայնացման» հարցում լինելով սպառնալիք, երաշխավոր, դաշնակից կամ, ըստ անհրաժեշտության, ինտերվենցիա իրականացնող, Չինաստանը շարունակում է ընթացքը դեպի այդ կարգավիճակ՝ ազդեցությունը տարածելով Ասիայում, Եվրոպայում և այլ տարածաշրջաններում: Այս ճանապարհին Չինաստանը շարունակաբար կիրառելու է փափուկ ուժի և ներդրումային քաղաքականության ողջ գործիքակազմը: Ազդեցության տարածման հիմնական մեթոդը լինելու է խոշոր ներդրումային քաղաքականության իրականացումը: Հիմնական թիրախներն են լինելու ենթակառուց-վածքային ներդրումները, հատկապես, երբ դրանք փոխկապակցվելու են «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հետ:

Չինաստանի՝ գլոբալ գերտերության կարգավիճակի նպատակակետը կարելի է համարել 2049թ., երբ Չինաստանը ամբողջությամբ կգործարկի «Գոտի և ճանապարհ» նախագիծը՝ նվիրված ՉԺՀ հիմնադրման 100-ամյա հոբելյանին: ԱՄՆ-Չինաստան կոշտ մրցակցությունը շարունակական է լինելու հաջորդող 3 տասնամյակների համար: Համաշխարհային թիվ մեկ գերտերության կարգավիճակը ԱՄՆ-ն հեշտությամբ չի զիջելու Չինաստանին և այդ մրցակցության ճանապարհին կիրառելու է բոլոր հնարավոր մեթոդները՝ չինական վերելքը կանխելու կամ արագ ընթացքը կոտրելու համար: Տարատեսակ պատժամիջոցներից մինչև ճնշումներ՝ կապված Չինաստանի ներքին խնդիրների հետ: Սրանք լինելու են Չինաստանի նկատմամբ ճնշումներ գործադրելու հիմնական գործիքները: ԱՄՆ համակ ուշադրության կենտրոնում են լինելու Չինաստանի ազգային և կրոնական

փորձրամասնությունների հետ կապված խնդիրները, որոնք ԱՄՆ-ն համարում է Չինաստանի աքիլեյան գարշապարը: ԱՄՆ-ն ճնշումներ է կիրառելու ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարթակներում՝ Կրոնական ազատության միջազգային դաշինքից մինչև ՄԱԿ և այլ կառույցներ: Չի բացառվում, որ ԱՄՆ-ն ցեղասպանություն որակի Չինաստանի գործողությունները՝ կապված ուլդուրների հետ, ինչը լրացուցիչ ճնշման գործիք կդառնա միջազգային հանրության ձեռքում: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ում ընկալում են «Գոտի և ճանապարհ» նախագծի ողջ կարևորությունն ու ազդեցությունն ամբողջ Եվրասիական տարածաշրջանի համար՝ բոլոր քաղաքական և տնտեսական լծակներով հանդերձ, որոնք Չինաստանը ձեռք է բերելու որպես հիմնական ներդրող և նախաձեռնող: Այս առումով ԱՄՆ ներքաղաքական կյանքում փոխհամաձայնություն կա թե՛ դեմոկրատական, թե՛ հանրապետական կուսակցությունների միջև և կարևոր չէ, թե որ կուսակցության ներկայացուցիչը կլինի Սպիտակ տան ղեկավարը առաջիկա տասնամյակներում:

Ըստ այդմ, մրցակցության առաջնային թատերաբեմերից է լինելու Կենտրոնական Ասիան, քանի որ այս տարածաշրջանը կարևորագույն նշանակություն ունի չինական «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության համար: Նախաձեռնությունը Չինաստանի ցամաքային ամենաարագ կապն է ապահովելու Ռուսաստանի՝ հետևաբար նաև ԵԱՏՄ-ի հետ, դառնալով գոյություն ունեցող խոշոր տնտեսական միավորման ենթակառուցվածքային հարթակը: Բնականաբար աշխարհաքաղաքական տեսանկյունից Կենտրոնական Ասիան սկզբունքային նշանակություն ունեցող տարածաշրջանի է վերածվում նաև ԱՄՆ-ի համար և ամերիկյան քաղաքականությունը միտված է լինելու այս պետությունների հետ հարաբերությունների խորացմանն ու ազդեցության ձեռքբերմանը: Պետությունների միջև ամուր տարածաշրջանային դաշինքի ստեղծումը թույլ կտա այդ երկրներին առավել արդյունավետ հավասարակշռել չինական ազդեցության տարածումը, եթե ԱՄՆ-ին հաջողվի տարածաշրջանում թուլացնել ռուսական և չինական

ազդեցությունները: Ռուսաստանի և ԵԱՏՄ տնտեսության համար «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը փրկօղակ է հանդիսանալու կայուն զարգացման ճանապարհին: Այդ ընթացքում Չինաստան-ԱՄՆ հարաբերությունները ունենալու են ինչպես Սառը պատերազմին բնորոշ հատկանիշներ, այնպես էլ դրան ոչ բնորոշ բաղադրիչներ:

Ոչ բնորոշ բաղադրիչներից են լինելու ամերիկյան և չինական բիզնեսների արմատավորված խոր գործակցությունը, որը շարունակական է լինելու, սակայն երկու կողմերն էլ փորձելու են իրենց բիզնեսի համար առավել նպաստավոր պայմաններ ձևավորել՝ օգտագործելով պրոտեկցիոնիստական քաղաքականությունը: Միաժամանակ, ԱՄՆ-ն ջանք ու եռանդ չի խնայի իր բիզնեսներն ու ներդրումները դիվերսիֆիկացնելու համար և նման հնարավորություն է դիտարկելու Հնդկաստանը, Կենտրոնական Ասիայի 5 պետությունները, Վիետնամը, ինչպես նաև լատինաամերիկյան պետությունները: Ամերիկյան այն ապրանքատեսակները, որոնք արտադրվում են Չինաստանում՝ ներառյալ ժամանակակից տեխնիկան, կա՛մ կտեղափոխվեն ԱՄՆ՝ առավել բարենպաստ հարկային միջավայր ձևավորելու արդյունքում, կա՛մ կտեղափոխվեն այլ երկրներ: Ամերիկյան, ինչպես նաև դաշնակից պետությունների ներդրումների դուրսբերումը չինական շուկայից հանգեցնելու է տնտեսական աճի դանդաղեցմանը, սակայն միանշանակ է, որ ամերիկյան բիզնեսները, որոնք մշտապես առավել հարմարավետ պայմաններ են գտնում բիզնեսը վարելու համար՝ կգտնեն քաղաքական դասավորվածություններում ամենանպաստավոր մեխանիզմները՝ ցնցումներից հնարավորինս զերծ մնալու համար:

Սառը պատերազմին բնորոշ հատկանիշները կլինեն սպառազինությունների մրցավազքը, քաղաքական, տնտեսական և մշակութային ազդեցության պահպանումն ու տարածումը, Չինաստանի համար նոր ազդեցության գոտիների նվաճումը և ԱՄՆ կողմից դրան հակադարձումը: Այդ մրցապայքարի հիմնական ասպարեզները կլինեն Եվրոպան, Ասիան և Աֆրիկան: Չինաստանի

համար բավական բարդ կլինի ազդեցության տարածումը Լատինական Ամերիկայի երկրներում, մանավանդ եթե Կուբայի կամ Վենեսուելայի նման պետություններում տեղի ունենան հեղափոխություններ, հեղաշրջումներ կամ այլ տեսակի իշխանափոխություններ և իշխանության գան Վաշինգտոնին հավատարիմ քաղաքական ուժեր: Սակայն այս երկրները մշտապես բաց կլինեն չինական ներդրումների և մեզանախագծերի իրականացման համար: Մրցակցությունը շարունակական կլինի Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում և այն տարածաշրջաններում, որոնք կհամարվեն «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության տարանցիկ ուղիներ: Չինաստանի դեմ ակտիվ օգտագործվելու են Հոնկոնգի, Թայվանի, Տիբեթի խնդիրները, մարդու իրավունքների պաշտպանությունը Չինաստանի տարբեր նահանգներում, ինչպես օրինակ ուլդուր մուսուլման փոքրամասնության իրավունքների խնդիրը Սինցյան նահանգում: Չի բացառվում ԱՄՆ-ի կողմից Թայվանի հետ առավել խոր հարաբերությունների հաստատումը՝ ընդհուպ մինչև Թայվանի անկախության ճանաչման գործընթացի սկիզբը, ինչը տեսանելի ապագայում քիչ հավանական է, քանի որ այն կարող է հրահրել Չինաստանի ռազմական ինտերվենցիա:

Հետկորոնավիրուսային աշխարհն աչքի է ընկնելու նաև Չինաստանի դեմ դատական հայցերի ներկայացման նախադեպերով՝ տարբեր միջազգային աստիճաններում: Տարբեր պետություններ հայցեր են ներկայացնելու Պեկինի դեմ՝ պահանջելով փոխհատուցումներ Չինաստանից կորոնավիրուսի տարածման պատճառով կրած վնասների համար և շատ հայտեր բավարարվելու պարագայում լրացուցիչ ֆինանսական մեծ բեռ կարող են դառնալ Պեկինի համար, ինչը կարող է դանդաղեցնել չինական տնտեսական աճն ու ազդեցության տարածման տեմպը: Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ-ն և դաշնակիցները բոլոր հնարավոր ուղղություններով ճնշում են գործադրելու Չինաստանի վրա, փորձելով դանդաղեցնել տնտեսական աճը, թուլացնել ազդեցությունը, վարկաբեկել Չինաստանին մարդու

իրավունքների վատ ցուցանիշների համար, ինչը կարճաժամկետ հեռանկարում տալու է շոշափելի արդյունքներ, սակայն երկարաժամկետ հեռանկարում Չինաստանը հաղթահարելու է բոլոր դժվարությունները, սակայն գլոբալ գերտերություն դառնալու ճանապարհին բավական մեծ զին է վճարելու թե՛ հեղինակության, թե՛ ֆինանսական առումով:

### **China's quest for the status of global superpower and the US resistance**

SUREN SARGSYAN  
*Brusov State University*

AIDA GEVORKYAN  
*Brusov State University*

ANAHIT MURADYAN  
*Brusov State University*

The aim of the article is to study the likely developments in the current processes of geopolitical rivalry in the post-coronavirus world. To this end, the article examines China's aspirations and the challenge posed by Beijing as a candidate striving for the role of a global superpower. The key factors discussed are China's initiative, particularly in the field of international investments, as well as the use of soft power and diplomacy from Asia to Africa and to Europe in the context of the "The Belt and Road" initiative. The main subject of the article is the US policy, which still has the status of the only global superpower countering China's aspirations. The article also studies the mechanisms used by the US to restrain China, the political and economic tools, including the use of sanctions as well as the problem of putting the issue of human rights in China on international agenda.